

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԿԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

Հ.Յ.Գ.
Պ.ՐԱՊ
A.R.F.
LIBRA

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՐԵԱԿՑԻԱՆ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

Դարձեալ ցարիզմը... Պարսկաստանի արիւնոտ ողբերգութեանը ևս միջամտեց նա իր սովորական ցինիկ վայրագութեամբ և հանգըրեց ազատարար հրդեհը... Բէակցիան յաղթանակում է Շահերի պետութեան մէջ Ռուսաստանի շնորհիւ: Պարլամենտը փլուժ է ուռւմբերի որոտի տակ, յեղափոխական պարագլուխները ձօձում են կախաղանների վրայ, մի սոսկալի ուրագան է անցնում ամբողջ երկրից, ազատութեան բիրտ դահիճները տօնում են արիւնալի յաղթանակը... Եւ այդ բոլորը՝ ցարական անարգ բռնապետութեան աջակցութեամբ, նրա խրախուսանքով, նրա ջանքերով:

Ռուս գեներալ Նեխոսովը, իբրև զօրքերի բարձրագոյն հրամանատար, նախագահում է աւերածի գործին: Իտեա ամբողջ բաղաբաղկիւրթ աշխարհի Ռուսական անսանձ դիպլոմատիան խողխողում է մի փոքրիկ ժողովրդի սահմանադրութիւնն ու ազատութիւնը, առանց որևէ առարկութիւն լսելու արևմտեան «լիբերալ» ու «ուսովապարական» պետութիւններից... Այդտեղ է ներկայ վայրկեանի բոլոր շշմեցուցիչ տրագիզիան: «Եւրոպան» չը կայ: Նա մարել է կապիտալիստական չոր ու գձուձ ախորժակների յորձանքների մէջ: Արևմտեան «մեծ հանրապետութիւնը» ըստ առաջնւոյն բարձ է գալիս իր արևելեան դաշնակցի ետքից: Գերմանիան իր էմս իր կառավարութեան ծափ է զարկում Պարսկաստանի ղեակցիային: Անգամ Մեծ-Բրիտանիան, որ միակ շատ թէ քիչ վստահելի ոյժն էր, երբեմն դիմագրաւող ցարիզմի շահատակութիւններին — նա էլ հետզհետէ խորասուզում է ղեակցիայի տիղմի մէջ, շոգիանում են գլխատօնեան փառահեղ աւանդութիւնները և այսօր բախտի մի շարամիտ հեգնանքով՝ անգլիական պահպանողականների օրգան «Times»-ն է, որ ուժգին բողբոլում է quasi ազատամիտ կուսակցութեան ստրկամիտ բաղաբաղկանութեան դէմ Պարսկաստանում:

Եւ այդպիսով ամբողջ մերձաւոր Արևելքում, Մակեդոնիայում, Հայաստանում, Պարսկաստանում ցարիզմը *carte blanche* է ստանում արևմտեան պետու-

թիւններից՝ վարելու ըստ իր ազատ հայեցողութեան: Անկման անդունդն է... Կը բարձրանայ՝ երբևիցէ Եւրոպան այդ անդունդից...

Առ այժմ ուս կառավարութիւնը միակ ու բացարձակ իրաւարարն է այդ դժբախտ ժողովուրդների ճակատագրի: Նա սեղմում է իր սեփական ժողովրդին և արշաւում է մոլեգնօրէն հարևան ժողովուրդների ազատութեան դէմ: Նա յաւերժացնում է ասիական վայրագ բռնակալութեան ղեժիմը իր սահմաններում և սիրով, եղբայրաբար ձեռք է մեկնում արևելեան դահճապաններին, երբ վերջինները նեղն են ընկնում: Նա հանդիսանում է ղեակցիայի ամրակուռ պատնէշ ամբողջ արևելքում:

Եւ հանրապետական դաշնակիցը, գլուխ ունենալով «ամենաարմատական» մինիստրութիւնը շարունակում է գետնատարած սողալ նրա առջև, կատարել նրա բոլոր քմահաճօյքները: Եւ ահա հանրապետութեան նախագահը գնում է միանգամ ևս սեղմելու դահճի արևնաթաթախ ձեռքը, գնում է միանգամ ևս սրբագործելու արեան ու աւերածի խրախուսանքը...

Դեռ թո՛ղ է, տարաբախտաբար, այդ գարշանքների դէմ բողբոլող ոյժը, բայց այնուամենայնիւ նա ընդունակ է երբեմն հասցնել շանթող հարևաններ, որոնք համատարած ղեակցիայի ու յուսահատութեան մէջ փոքրիկ սփոփանք են ճնշած, հալածական ժողովուրդների համար: Այդ ոյժը սօցիալիզմն է: Նա է միայն, որ մամուլի մէջ ու պարլամենտներում, արհամարհելով դիւանագիտական կեղծ ու պատիր նկատումները, մերկացնում է դեսպոանների արարքները, որակում է նրանց իրենց պատշաճ տիտղոսներով և կապիտալիստական աշխարհի գարշանիւթ քաստի մէջ բարձրաձայն հռչակում է Իրաւունքի ու Ազատութեան անսասան պատգամները: Բրիտանական պարլամենտում՝ աշխատաւորական կուսակցութեան պարագլուխ Օգրէդի էր, որ տիրող մեղկ ու մահացնող մթնոլորտում արտասանեց իր կորովի ձառը Իրաւորութեան Ռուսաստան անելիք ուղևորութեան դէմ: Ֆրանսիական պարլամենտում Վայեանն էր, որ առիթ վերցնելով Ֆալիերի ուղևորութիւնը դէպի Ռուսաստան՝ հնչեցրեց մի սքանչելի վաղուց չը լուած մեղադրական՝ ցարի ու նրա կառավարութեան դէմ: Նախագա-

Տի անընդհատ ազդարարութիւնների ու ստրուկ մեծամասնութեան գոռում-գոչումների մէջ, սօցիալիստական Ֆրակցիան յանձին Ղայեանի, մի մեծ ու բովանդակալի ճառով անարգ սիւնին բեւեռեց Պետերբուրգի երգմնագանց և ուխտագրուած բռնաւորին, նշաւակեց նրա գործերը սկզբից մինչև վերջը, անւանեց ցարին «մարդասպան», իր լաւագոյն քաղաքացիների դահիճ...

«Մարդասպան» — Տնչեցին ուրիշ ձայներ սօցիալիստական աթոռներից: Բառը փոթորիկ յարուցեց, ինչպէս և սպասելի էր այսօր բուրժուազական մամուլը ևս կատարութեան շանթեր է թափում այդ ահագին սկանդալի առթիւ: մինչև օրս միայն Երզրզրի տէրն է արժանացել պարլամենտներում այդ որակումին: Այդպիսով ցարը այսուհետև պաշտօնապէս ևս եղբայրացաւ Աբդիւլ-Համիդին:

Վ Ա Ն Ի Դ Ե Պ Ք Ե Ր Ը

(ԴՐՕՇԱԿ) ՀԵՌԱՅԻՐՆԵՐ

(Հայտնուած Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ Ար. Գործոց Նախարարներուն և Եւրոպական մամուլին)

Հակառակ թիւրք կառավարութեան ապահովութիւններուն, տաճիկ զօրքերը Վանի նահանգին մէջ աւեր աւերակ կընեն, պատրակ բռնելով ժողովուրդի զինաթափումը, ինչպէս նաև հաւատացնելու համար Եւրոպային թէ ապատարութիւն կայ: Իշխանութիւնները կատարած կաշխատին, ամէն դնով, զէնք գանել մէն մի գիւղի մէջ: Անլուր տանջանքներ գործ կը դնեն Թահիր փաշայի տղուն ճէվդէթ պէյի հրամանին տակ: Չինուորները տասը օր շարունակ բռնաբարոյմներ կատարած են Խաչէնի գիւղացուհիներուն վրայ: Հատ մը աղջիկներ բռնաբարուած, հոգեւորք վիճակի մէջ են: Եօթը մարդ և երկու կին ծեծի տակ մեռած են, յիսունէն աւելի կիներ նւաղած: Որովհետև կառավարութիւնը, սպառնալիքի տակ, անպատճառ զէնք կը պահանջէ, դիւղացիները վայրագ տանջանքներէ ազատելու համար զէնք կը դնեն և կը յանձնեն իշխանութեանց: Անձնատպանութեան շատ մը զէնքեր պատահած են: Ժողովուրդը ահաբեկ և ահաբեկ վիճակի մէջ, ճամբայ կը փնտռէ խմբովին գաղթելու:

Առուիտի ժողովուրդը, յուսահատութեան մղած, եղած իր ժողովուրդներուն զէնքով կը պատասխանէ, որով տեղի ունեցած են արիւնահեղ ընդհարումներ:

*

Յունիսի 7-ին Պէկլի, Ուսո, Մէճիդ, Աէգիւր քիւրդերը սպաննեցին Մուշի Ալբրիկ վանքէն, Չաքարիա վարդապետը և վանահայրը Աւարեան, վիրաւորեցին շատ մը հովիւներ և թալանեցին վանքը: Իր նախորդը, Ղազար վարդապետը նոյնպէս սպանուած է 1900-ին, և անոր հեղինակները անպատիժ մնացին ինչպէս այսօր: Աերջերս երեք վաշտ զօրք հասաւ Մուշ հայ գիւղերուն դէմ՝ գործելու համար, նախօրոք պատրաստուած ծրագրի մը համաձայն:

Կ Ո Ւ Ի Կ Ա Ռ Կ Ա Ռ Ո Ւ Ս

Կառկառի մէջ արիւնահեղ կռիւներ կան հայերուն և զօրքերուն միջև, վանէն և Բաղէշէն գիւղեր-ցերեկ

զօրքեր կը գնան: Լուր կը պտտի թէ մի վաշտ զօրք ոչնչացուցած են, կռիւը շատ տաք բնոյթ ունի: Մանրամասնութիւններ կը պակսին:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԷՆ

Թիւրք իշխանութիւնները աւարտեցին հայերու տուներու խուզարկումը: Բռնած են 260 հրացան, 207 քիլո ուժանակ, 30,000ի չափ փամփուշտ և ձերբակալած են 100 մարդ, իբր յեղափոխական: Անգլ. Ֆրանս. և Ռուս. դեսպանները դիմում ընելով Գրան, և յայտնելով որ այլևս Վանի թիւրք ժողովուրդը ապահով է, պահանջեցին որպէս զի Գուուր միջոցներ ձեռք առնէ ձերբակալելու կատարածի հեղինակները և առջևը առնէ քրդերու կողմէն որեւէ յարձակումի հայերու դէմ, քանի որ անոնք այլևս զինաթափ եղած են:

ՎԱՆ, 25 մայիս

Խուզարկութիւններու սարսափներու հովերը գաւառները ևս տարածեցաւ: Արջակի մէջ երեւան եկած էր դաւաճան մը որ միւրիւրի մօտ երթալով կանչեր էր տեղացիներ և յայտներ որ իզուր չընդդիմանան, ինքը զէնքի տէրերը կը ճանչնայ, թող բերեն զէնքեր տան որ իրենք ազատ թողան և չը տանջին: Հակառակ պարագային պիտի զղջան: Հէնց նոյն օրը քսանի չափ հրացան և մէկ քանի հազար փամփուշտ կը յանձնեն և բոլորն ալ ազատ կը ձգեն: Նոյն շրջանի մէջ նոյնը պատահած է նաև քանի մը ուրիշ տեղեր:

Մայիսի 15-ին դեռ շուկան փակ կը մնար: Մօտ 25 աղաներ վալին և Ֆէրիզին քով կանչեցան: Ասոնք յայտներ էին թէ խիստ խուզարկութիւն պիտի ըլլայ, ուստի յաւ է առանց զայմաղալի, որմէ կրնան անմեղներն ալ տուժել, յեղափոխականներու մնացած զէնքերը ևս յանձնին, տեղացի բազ. յանցաւորները գան իրենց զէնքերով կը ներւին, իսկ զրսեցիները կամ պիտի յանձնէք կամ մենք ամէն ջանք գործադրելով զանոնք կամ կոչնչացնենք կամ կը բռնենք: Նոյն բովանդակութեամբ պաշտօնական գրութիւն մ'էին ցրուած և պատերը փակցուցած: Ահա թարգմանութիւնը այդ պաշտօնական յայտարարութեան:

«Վանայ մէջ վերջերս ձեռք բերուած շատ մը զէնքերու, ուղղամթերքներու և պայթուցիկ նիւթերու նման շօշափելի բաներով իրենց գոյութիւնն ապացուցուած ու հաստատուած և տեղական խաղաղութիւնը խանգարող ու ժողովուրդի հանգիստն ու անդորրութիւնը վրդովելու պատճառ տուող, անպատշաճ վարմունքներու մէջ քանիցս գործնականապէս գտնուած հայ յեղափոխականներու գործակիցներն իրենց քովը գտնուած զէնքերով ու տեսակ-տեսակ գործիքներով միասին, թող անմիջապէս գան կառավարութեան յանձնելին: Հակառակ պարագային խուզարկութիւններ պիտի կատարին և յիշեալ զէնքերն ու ուղղամթերքներն ձեռք պիտի բերին և յանցաւորներ ու զանոնք պահպանողներն պիտի հետապնդեն և իրենց մասին օրէնքի տրամադրութիւնը պիտի գործադրուի: Կը յայտնենք որ որոշուած է վերջնականապէս վերջ տալ երկրի ու ժողովուրդի անդորրութիւնը վրդովող իրաց այս վիճա-

կին և անկեղծօրէն կազդարարենք որ հաւատարիմ և հնազանդ ժողովուրդը փութայ ըստ այնմ վարելէ՛ւ:

Մայիս 2 | 15 1908

Վանայ վալիմ

324

Այդ օրը մինչև երեկոյեան դեռ ժողովուրդի մէջ րէակցիան և մութ ուժերն այնքան բարձրագոյ չէին: Յաջորդ օրը աղաները որոշեցին կառավարութեան յայտնել որ յեղափոխականներու ունեցած զէնքերու մասին ոչ գիտեն, ոչ գաղափար ունեն, փնտռէ և գտիր ըսած էին:

Երեկոյեան արև մտնելուն 2 ժամ առաջ յանկարծ սկսեց զօրաց շարժում մը դէպի Այգեստան և Այգեստանի հիւս. սարալանջը, գլխաւոր փողոցի բանի մը կարեւոր դիրքերը, արևելքէն դաշտը և հիւսիսէն Այգեստանի վերջին գծերը բռնեցան: Մայիս 16-ին մինչև երեկոյ կառավարութիւնը շարունակեց զօրաց դասաւորումը այդ մասերուն մէջ: Այգեստանի հարաւարեւելեան կողմը եղած զօրանոց տարեցաւ 4 թնդանօթ, հիւսիսային սարալանջ 3, արևելեան դաշտի մէջ փոսեր փորեցան ու ամբողջ գծով շղթայ պահակ դրին ու 6—7 վրան տնկեցին: Հաւանաբար այսօր կամ վաղ ներսերն և կարեւոր դիրքեր զօրք դնեն:

Եւ ահա աղաներու կողմէն 3 հոգի կրկին կուսակալի մօտ կերթան ամիստիա ուղելու և կասկածելիներու ցուցակը, կուսակալը կը յայտնէ որ, յիրենց զէնքերով եթէ գան, ոչ բրէական յանցագործներուն ամիստիա կար եւ եթէ նոյնիսկ, աւելացուցած է, մէկ բանի հազար զօրք կոտորւին զէնքեր ու յեղափոխականներ պիտի բռնեն:

Վերէն խիստ հրաման եկած է ամէն զոհողութիւնով, հետապնդել յեղափոխականները, սակայն միայն կառավարութեան միջոցով, ոչ թիւրք խուժանի, որուն յայտարարած է որ եթէ խառնի կամ հայկական սահմաններուն մօտենայ կը գնդակահարուի ժողովուրդը փակած՝ շուկայ չերթար, եթէ բանի մը օր ևս շարունակելի, անտեսական տագնապը ամենասուր և վտանգալից կերպարանք կստանայ:

Կառավարութիւնը իր պաշարումները սաստկացնելով ժողովուրդը ահաբեկումի և յետազդեցութեան ենթարկեց: Մութ ուժերը եւ ու գեռի մէջ էին, մատնիչներ, լրտեսներ կը վխտային վստահ ըլլալով իրենց անպատիժ մնալուն: Ասոնք խմբերով կը մտնէին տուներ և մարդ եղած պարագային կառավարութեան կը յանձնէին: Խուժը մը ապաստանած էին աղբիւրի մը մօտ նեղ պահարանի մը մէջ: Մայիս 19-ին առաւօտեան խուզարկութիւնները սկսան, որ մինչև կէսօր հետեանք չունեցաւ: Զօրքերը արդէն շրջապատել էին պահարանի շրջանը և կողմնակի ցուցմունքներով գտան պահարանի մուտքը, ուրկէ մարդ մտցնելով իմացան թէ մարդիկ կային ներսը: Հորին մէջ եղողները կը վճռեն յանձնել անդիմադիր: Ընդամէնը 19 հոգի բոլորն ալ կապելով քաղաքի զօրանցը տարեցան, ուր ծեծի և բանտարկութեան կենթարկեն, լուր կար թէ մէկը ծեծի տակ մեռեր է. բայց յետոյ հերքեցաւ:

Ամսոյս 20-ին զիկզակ խուզարկութիւններ սկսան, տարին 3—4 տեղերէ անհատական զէնքեր, բացած են 3 պահարան որոնցմէ բաւականին մթերք գտած

են կրան զէս ու դէն ձերբակալութիւններ եղան: Յաջորդ օրը բռնել էին մօտ 21 հոգի, խեղճուկրակ մարդիկ և երեք, իբր թէ, կազմակերպական ձի Ապա դարձեալ իրենց ունեցած ցուցակով զանազան անհատներէ պահանջեցին զէնքեր, մէկը յանձնեց և ազատ թողեցաւ:

Մայիս 23-ին կէսօրէն 2 ժամ յետոյ հրացաններու որոտի ձայն լսեցաւ: Զինուորները պատահամբ տուն մը կը խուզարկեն, ուր գտնուող քանի մը ընկերներ, չուզելով անձնատուր ըլլալ՝ ձիւտուր զօրք մը զարնելով, պաշարող շղթան կը կտրեն կանցնեն և կազատին անվնաս, ապուշ ձգելով զօրքերը, որոնք ճարահատ, բուռն կրակ կը տեղան ետեւուն, թէև աննպատակ: Եոյն գիշերը բանի մը տուններ կը կողոպտեն, մէկ տան մէջ կսպանեն 3 անմեղ մարդ, ուրիշ խուժ թաղերու մէջ պահակները մթնելուն կը կողոպտեն, կը ծեծեն և այլն: Առաւօտն ևս բաւական անցնող դարձող կը կողոպտեն և ապա կսկսեն խուզարկութեան որ ոչ մէկ արդիւնք չը տար:

Ժողովուրդը կը խուճէր հիւպատոսներու թաղերու մէջ: Կառավարութիւնը երէկ կանչեց կրկին հայ աղաները, պահանջեց յանձնել կոմսը և Սարգիսը կամ վտարել և եկեղեցիներուն մէջ յայտարարել. առաջնորդը քարոզ պիտի խօսի այս մասին: Սաստիկ սով է:

Մայիս 24-ին եղան կարգ մը ձերբակալութիւններ, այնպէս որ 8 օրւայ մէջ 50—60 հոգիի հասաւ ձերբակալածներու թիւը:

Տ Ե Ր Ս Ի Մ Ը Ա Պ Ս Ս Ա Մ Բ

Յունիս 20

Անշուշտ ցարդ իմացած կըլլաք Տէրսիմի բիւրդերու կողմէ 2մշկածագի գրաւումը, և 4 գիւղերու թալանումը, Պէյրէթիլ, Վասիկան, Վանք և Պարասոր. վերջինս զինւած դիմադրութիւն ցոյց տւած է բայց 84 հոգի զոհ տալէ յետոյ անձնատուր կըլլայ: Այս քաղաքը 95—96-ի դէպքերուն մեծ պատուհասը եղած էր հայերուն:

Երկու բիւրդ աշիրէթներ խոշուշաղցիք և շամուշաղցիք, բաղկացած 800 հոգիէ, յունիս 6-ին յարձակելով 2մշկածագի վրայ, 24 ժամայ կուէ մը յետոյ կիրակի առաւօտ (յունիս 7) գրաւած են զօրանոցը, մէջը գտնւած 10 զինուորներէն 6-ը սպաննւած և 4-ը փախած են իսկ քաղաքի պաշտպանութեան համար գտնւած 400 զօրքերն 24 ժամայ ընդդիմութենէ յետոյ չը կարողանալով դիմանալ բիւրդերու գրոհին՝ փախելով քաղաքը բիւրդերուն յանձնած են:

Շրջակայ թիւրք գիւղերը ահաւորովի մէջ են. բիւրդերը կանխաւ կտրած ըլլալով հեռագրութիւնները, հազիւ կրցած են երկու զարթիէ զրկել Խարբերդ օգնութիւն խնդրելու համար: Թիւրք գիւղացիները կը կարծեն թէ հայ ֆէդայիներ ալ կան բիւրդերուն մէջ որ հայերուն չեն վնասեր:

*

Վայրին մօտիկ մեր ուրիշ մէկ թղթակիցը մայիսի սկզբները ի միջի այլոց կը գրէր.

կուսակցութիւնը պիտի կանգնած մնայ դ ա ս ա կ ա ղ ա յ յ ի ն կ ու լ ի հողի վրայ, որ նա պիտի ձգտէ իր ձեռքը գրաւելու քաղաքական իշխանութիւնը և համայնայնելու արդիւնագործութեան բոլոր միջոցները:

Գրեզդէնի պարտախախտութիւնը (գերման. սոցիալ-դեմոկրատիայի տարեկան համագումարը) ամենախիստ ոճով դատապարտեց ընկիզիծնիստական նոր դադափարներն ու տակտիկան և ձայների ճնշող մեծամասնութեամբ «իրկեց» մարքսիստական սրբութիւն-սրբոց հաւատածն ու յեղափոխական «տակտիկան»:

Բայց Գրեզդէնի պարտախախտութիւնը (գումարած 1903 թ. աշնան) ուղղեց իր շանթերը ոչ միայն Բերնշտայնի ու նրա քարոզիչներ դէմ, այլ և Փրանսիական սոցիալիստ կուսակցութեան դէմ, որ ժօրէսի առաջնորդութեամբ, ձեռք-ձեռքի առած արմատական ու դէմօկրատ կուսակցութիւնների հետ՝ մղում էր տարիներից ի վեր փայլուն կուսակցական հայրենի ընկիզիծնի դէմ, յանուն արդարութեան ու հանրապետական ազատութիւնների: Բերնշտայնը կամայ-կամայ մոռացւեց և ժօրէսը դարձաւ փոթորիկով վիճաբանութիւնների ու անվերջ յարձակումների առարկան: Ամստերդամի միջազգային սոցիալիստական կոնգրէսում (1894 թ.) կուսակցութեան ժօրէսից դէմ օրակարգի կենտրոնական խնդիրն էր: Բէ-բէլ և Գեդ, իբրև հին, յեղափոխական մարքսիզմի շերտնուանդ աւանդապահներ, բազմաթիւ նիզակներ շարեցին այդ առթիւ, յայտարարեցին, որ ժօրէսը շեղում է սոցիալիստական «հին փառահեղ տակտիկայից», մթնայնում է աշխատանքների դասակարգային ինքնագիտակցութիւնը, մտնեցնում է դասակարգերը, վտանգում է սոցիալիզմը և այլն: Կառուցիկ մինչև իսկ բանադրանքի ենթարկեց ժօրէսին, իր օրգանի մէջ բարձրաձայն թելադրեց՝ արտաքին կուսակցութիւնից հռչակաւոր սոցիալիստի և պահպանել շարժման ընթացքը: Պլեխանովների ամբողջ երամը ձայնակցեց ուղղափառութեան մեծ Վաբեիին... Գաւ ամենամութ, ամենատիրալի գրաւաններից մէկն է միջազգային սոցիալիստական շարժման:

Տեսնենք, թէ որքան մեղանշում էր սոցիալիզմի դէմ ժօրէսի կուսակցութիւնը և թէ որքան հետևողական էին Գեդ ու Բէբէլները իրենց անհաշտ ընկիզիծնարիզմի մէջ: Հարկաւոր է փոքր ինչ կանգ առնել այդ պատմութեան վրայ: այստեղ թաղանթ է դադափարների, հասկացողութիւնների մեծ շփոթութիւն և նրա վերլուծումը թերեւս կը տայ մեզ ճշգրիտ ըմբռնում՝ սոցիալիստական բուն սկզբունքներին ու տակտիկային:

Ինչ մեղադրանքներ էին բարդում ժօրէսի ու իր կուսակցութեան վրայ: Գրեզդէնի դատը, ինչպէս յայտնի է, երկու հակամարտ հատուածներ էր բաժանել ոչ միայն ամբողջ Փրանսիական ազգը, այլև սոցիալիստ կուսակցութիւնը: Մի կողմը ժօրէսն էր, որ իր հետ ունենալով ձեռքի ու մտքի աշխատանքների մեծամասնութիւնը, նետուեց կուսի մէջ: միւս կողմը Գեդն էր իր համախոհներով, որ քարոզում էր ձեռնպահ մնալ անտարբեր հանդիստեան բուրժուանների կուսի հանդէպ: Երկու թեւերի հակառակութիւնը առանձնապէս սաստկացաւ Միլլանի միխիստը դառնալու օրից ի վեր: Մի մեծ անակնկալ սկզբունքի ու տակտիկայի մի մեծ, ահաւոր խնդիր էր ծագում միջազգային սոցիալիզմի առջև: Սոցիալիստը կարող է միխիստը դառնալ, թէ ոչ: Ոմանք համարում էին սկզբունքի հարց, ուրիշները՝ տակտիկայի: ժօրէսը պաշտպանում էր Միլլանին: Գեդի կուսակցութիւնը դատապարտում էր սկզբունքով և պահանջում էր միջազգային սոցիալիստական առեւտնից միանգամ ընդմիջ տրոշել, որ երբէք ոչ մի պարագայում սոցիալիստը չի կարող մտնել բուրժուազական կառավարութեան մէջ, իբրև նրա անդամ: Խնդիրը դրեց 1900 թ. ին Պարիզում գումարած միջազգային սոցիալիստական կոնգրէսի առջև: Բեբէլից, անցաւ կարևոր կառուցիկ յայտնի բանաձևը, ուր սոցիալիստի մասնակցութիւնը բուրժուական կառավարութիւններին՝ վճռուում էր բացասական ձևով, թէև խիստ նշանակելի վերապահութեամբ: Այդ ընդերվը հետևեալն է.

«... Եթէ որևէ մասնաւոր պարագայում քաղաքական

դրութիւնը անհրաժեշտ դարձնէ այդ վտանգաւոր փորձը դատապարտելու հարց է և ոչ սկզբունքի միջազգային կոնգրէսը չի կարող այդ մասին վճիռ կայացնել»:

Գեդիստները դժգոհ մնացին այդ սուսաձգական բանաձևից, և ձայն տուին նրա դէմ: Ժօրէսն ու իրայինները ընդհակառակը քեթարկեցին: Ժօրէսը Լքեց Միլլանին, թէև դրւատում էր նրա կատարած ընթացիկ սոցիալիստական որոշ քայլերը, բայց միւս կողմից նա չէր կարող չը խոստովանել այն չարիքները, որ Միլլան հասցրեց բանաւորական դատին, միխիստը դառնալով:

Կուսակցութիւնը չէր վերջացաւ, կուսակցութեան ներքին պառակտումը շարունակեց: Սկզբունքի և տակտիկայի ուրիշ խնդիրներ հրապարակ եկան: Ժօրէսի կուսակցութիւնը շարունակում էր եռանդուն կերպով աշակցել հանրապետական միխիստութիւններին (Ալալեկի-Բուսսօյի, Վոմբի) թէ ընթացիկ ժօրէսի գործունէութեան մէջ և թէ կուսի մէջ՝ ընդդէմ ընկիզիծնի—կոնտրակոնտրի, նայիստիստների, հակասեմիտների, արքայականների: Գեդիստները չէին մարտում այդ հանգամանքը, նրանք համարում էին սոցիալիզմի միջատութիւնը դրեթուսեան հարցի մէջ՝ անմոտութիւն, նրանք սուսում էին, որ կղերի, միլիտարիզմի և նման չարիքների դէմ հարկ չը կայ կուսակցութեան ներկայումս, որ նրանք կը չբռնան միայն կապիտալիզմի չքանալու հետ: նրանք պնդում էին, որ պրօլետարիատը պիտի կղերանայ, որ սոցիալիստական կուսակցութիւնը պիտի քայլէ անշատ, միւս բուրժուա կուսակցութիւններից, որ նա պիտի մնայ միշտ և ամեն պարագայում «յեղափոխական պրօլետարիատի» մէջ, դիմադրական, անհաշտ դիրքում՝ բուրժուազական բոլոր կառավարութիւնների վերաբերմամբ:

Այստեղ է հասկացողութիւնների շփոթը, սյուսեղ է սկզբունքների ու տակտիկայի կատարեալ խեղաթիւրումը: Կարմիր ըմբոստութեան, հին, բառամոլ ընկիզիծնարիզմի դժգոհանքն էին, որ խոսում էին ժիւլ Գեդի բերնով—բոգնով, որ արդէն յաղթահարած են և այլևս ոչ մի առնչութիւն չունին կենսի նորագոյն պահանջների հետ, գէթ արևմտեան քաղաքակրթութեան մէջ: Այդ պարունները իրենք ամենայն հաւատարմութեամբ աշակցել պահպանել էին ինչ օն Բուրժուալի արմատական միխիստութիւնը, նրա գոյութեան ամբողջ ընթացքում (1895 թ. —1896)...

Եւ վէճը միանգամ ևս փոխադրեց միջազգային սոցիալիստների առջև, նա դրեց Ամստերդամի կոնգրէսին (1904 թ.): Գեդը պահանջում էր, որ միջազգային կոնգրէսը նայն ձևով դատապարտէ, նայն պարսաւանքն արձակէ ժօրէսեանների դէմ, որպիսին արձակած էր Գրեզդէնի պարտախախտից Բերնշտայնի ու ընկիզիծնիզմի դէմ: Եւ նա նորէն մերժուում ստացաւ: Նա դարձեալ սխալեց իր հաշիւների մէջ: Ամստերդամի կոնգրէսը չը դատապարտեց ժօրէսեանների տակտիկան: Արդևր-Վանդերվելեան բանաձևը, որ դիմամբ դուրս էր նետել ոմանց առաջարկած դատապարտումն ու պարսաւանքը, ստացաւ 21 ձայն ընդդէմ 21-ի: (Այն ժամանակ դեռ քեթարկում էր ըստ սկզբութիւնների):

Այդ 21 ձայնը ընդդէմ 21-ի միևնոյն ժամանակ հասկացնում էին, որ միջազգային կոնգրէսը այնքան էլ ձեռնհաս չէ դատաւիճիլ արտասանելու Փրանսիայի սոցիալիստական կուսակցութեան դէմ, որը գործում է, ինչպէս թելադրում են իր հայրենիքի առանձնայատուկ պայմանները:

Խնդիրը, սակայն տեղային վիճաբանութիւնների առարկայ եղաւ և գերմանական ուղղափառ, իբր յեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, ժօրէսից ջախջախելու համար այդտեղ ևս, Ամստերդամում, կրկէս նետեց իր լուսագոյն ձին Ագուստ Բեբէլին, որ քիչ առաջ ջախջախել էր Բերնշտայնից Գրեզդէնում: Սկզբունքային ու տակտիկական մեծ խնդիրներ յուղեցին այդ փոթորիկոտ նիստերի միջոցին: Բեբէլը իհարկէ, սկզբունքով չէր կարող բողոքել այն փաստի դէմ, որ Փրանսիական սոցիալիստները, ժօրիստները, համակերպելով մարդկայնութեան ու ար-

դարութեան իրենց բնազդին և միանգամայն քաղաքական ու կուսակցական մտահոգութիւններին՝ նետուել էին մի փոթորիկի պայքարի մէջ, փրկելու համար միլիտարիզմի ճիրաններից մի անմեղ մարդ։ Ամբողջ աշխարհի սօցիալիստական բոլոր կուսակցութիւնները ծափահարում էին ժամանակին Փրանսիական ժօրէսիստներին, որոնք մղում էին այդ մեծ պայքարը յանուն Գրէյֆուսի ու արդարութեան, ընդդէմ գինւորական, կղերա-նացիօնալիստական, խաժամուժի, թեթեւ տաճարատական, դէմօկրատ—հանրապետական կուսակցութիւնների հետ։ Ամբողջ աշխարհը... բացի երկու մարդուց, բացի երկու սօցիալիստներից. մէկը մարքսսմուլ Ժիւլ Գեդէն էր, որին իր մրցուժը Ժօրէսի հետ հասցրել էր շրայնութեան գագաթնակէտին, միւսը—Ալի-հէյմ Լիբկնեխտ, որի չափազանց տարօրինակ ընթացքը այդ կարևոր պատմական վայրկեանում մինչև վերջն էլ չը կարողացան բացատրել։ Յամենայն դէպս, բոլոր երկրների սօցիալիստական կուսակցութիւնը, ի իսկ նրանց և դերմանական սօցիալ-դէմօկրատիան, միամայն գտնում էին, որ ժօրէսեանների տակտիկան եղել է միանգամայն համապատասխան սօցիալիզմի սգուն, որ անհրաժեշտ էր միջամտել պայքարին, նոյնիսկ կոմպրոմիսների դնով դաշն կապել բուրժուազական ձախակողմեան Փրակցիանների հետ և կռիւ մղել յանուն արդարութեան, որ բռնաբարւած էր յանձին մի անհատի, ինչպէս «բուրժուա» մի անհատի։

Ուշք դարձրէք. պատմական այդ յիշատակելի փաստով համաշխարային սօցիալիզմը ցայտուն կերպով և մի անգամ ընդ միշտ սկզբունքով որոշում է սօցիալիստական տակտիկայի մի ընդհանուր ու խոշոր գիծը,— այն՝ որ սօց. կուսակցութիւնը կարող է և պէտք է իհարկին միանայ բուրժուազական առաջադէմ Փրակցիանների հետ, որոշ նպատակներ առաջ տանելու, որոշ դատեր պաշտպանելու համար։ Գրանով իսկ ջանախառն էր Ժիւլ Գեդէն և ուրիշ մի կարգ ֆանատիկոսների պաշտպանած «թեղիւր» թէ «սօցիալիստական կուսակցութիւնը պէտք է միշտ մնայ անջատ, կղզիացած, «յեղափոխական դիրքում»...

Բէբէլ չէր կարող պաշտպանել սկզբունքով և միւս առաջարկը (դարձեալ դեմոստրատիկ) թէ սօցիալիզմի պարլամենտական Փրակցիան ամեն պարագայում պիտի մնայ «յեղափոխական» սպառնալիցիայի մէջ՝ բուրժուազական կառավարութիւնների դիմաց։ Կա չէր կարող այդ պաշտպանել քանի որ ինքը գերմանական սօցիալ-դէմօկրատիան ևս որոշ պայմաններում՝ պաշտպան է հանդիսացել կառավարութեան և այն էլ կայսերական և կանցլերական կառավարութեան։ 1893—94-ին, երբ Ապպրիլի մինիստրութիւնը բիսմարկեան հովանաւորող սիստեմի քաղաքականութեան տեղ (Schutzzollpolitik), մոյրեց առևտրական դաշինքների սիստեմը Գերմանիայի ու հարևան պետութիւնների միջև—մի հանգամանք, որ մեծապէս իջեցրեց մաքուր ապրուստի անհրաժեշտ պիտույքների վրայ և դրանով իսկ աժանցրեց կեանքը չքաւոր դասակարգերի համար—մի այդպիսի ծանրակշիւ հանգամանքում, երբ այդ համակրելի նորմուժութեան դէմ ապստամբել էր ագրարիանների և բոլոր յետադէմ ուժերի դաշնակցութիւնը՝ գերմանական սօցիալ-դէմօկրատիան եռանդով աջակցում, թե եր տալիս մինիստրութեան...

Եւ այժմ Ամստերդամի համագումարին այդ նոյն սօցիալ-դէմօկրատիայի հեղինակաւոր առաջնորդը եկել էր «անհայտնութեան» ու «յեղափոխականութեան» քարոզ կարգում Փրանսիայի ժօրէսիստների վրայ... Ի՞նչ էր ասում նա։ Սկզբունքով ու լուելեայն ընդունում էր, որ սօցիալիստները յայտնի յոմենտներում կարող են թե և տալ բուրժուազական այս կամ այն մինիստրութեան, բայց, ասում էր, այդ աջակցութիւնը պէտք է լինի վայր կենսական... Այս մի հիմնական տարբերութիւն մեր և ձեր տակտիկայի մէջ—ասում էր Բէբէլ, դիմելով Ժօրէսի կուսակցութեանը—մենք նայած հանգամանքներին, ազատամիտների հետ ենք, ընդդէմ կաթօլիկ կենտրոնի, կամ այդ վերջինի հետ ենք, ընդդէմ ազատամիտների, բայց միշտ վայրկենական ձևով։ Այն ինչ՝ դուք դաշնակցել էք բուրժու-

ժուական ձախակողմեան Փրակցիանների հետ՝ մշտական ձևով...

Մշտական (permanent) ձևով, Փրանսիական սօցիալիստները, իհարկէ, չէին էլ մտածել դաշնակցել բուրժուական ձախակողմի հետ, ընթրումների մինիստրութիւնը պահպանելու համար։ Բէբէլ դիտէր այդ նա ուզում էր ասել, որ ժօրէսեանների դաշնակցութիւնը երկար ժամանակով է կուռում իր դաշնակցութիւնը և շատ է արդէն սիստեմատիկ ձևով աջակցում մինիստրութեան։

Այդ մէկը ճիշտ է. և այդտեղ է սօցիալ-դէմօկրատիական, զուսի-յեղափոխական պատճառաբանութեան թուլութիւնը։ «Յեղափոխականների» տրամաբանութեամբ բուրժուազական այս կամ այն Փրակցիայի հետ կարելի է դաշնակցել, դիցուք մի քանի շաբթուայ, բայց երբ այդ ժամանակամիջոցը երկարում է—դաշնակցութիւնը դառնում է արդէն միտասկար, հակասօցիալիստական ու պարսպանի...

Ոչ մի տարակոյս չը կայ, տակայն, որ եթէ Գերմանիայում իշխէին Փրանսիական պայմանները, եթէ այնտեղ էլ գոյութիւն ունենար ճշմարիտ պարլամենտարիզմ, պատասխանատու մինիստրութիւն և այլն, եթէ այնտեղից էլ հանդէս դային Ամբի, Ալլգէկ-Ռուսսօի պէս մինիստր նախագահներ, «յեղափոխական» սօցիալ-դէմօկրատիան նոյնպէս տարիներով կը դաշնակցէր բուրժուազական ձախակողմի հետ՝ կանգուն պահելու համար այդպիսի կառավարութիւններ, որոնք շիտակօրէն ծրագրում են ու կորպի կերպով առաջ են տանում մի ամբողջ շարք բուն ուսմիտական ընթրումների։ Կման երևոյթ մենք տեսանք Իտալիայում, Յանարգելլիի մինիստրութեան օրով, Իտալիայում, ուր քաղաքական սիստեմը նոյնպէս համեմատաբար ուսմիտական է, ուր մինիստրները պատասխանատու են պարլամենտի և ոչ թագաւորի առաջ (ինչպէս Գերմանիայում է) և ուր մինիստր-նախագահ Յանարգելլի ծրագրել էր մի շարք հիմնական սօցիալական ընթրումներ։ Այնտեղ ևս սօց. կուսակցութիւնը եռանդով աջակցեց ընթրմի մինիստրութեան։

Ոչ մի դարմանք՝ որ հանրապետական Փրանսիայում աւելի երկար տևեց սօցիալիստների դաշնակցութիւնը բուրժուազական ձախակողմեան թեքի հետ։ Գրէյֆուսի դորժը մի քանի շաբթուա չէր կարող սպառել. իսկ այդտեղ արդէն Փրանսիական սօցիալիստների (ոչ գեդիստների) բռնած դիրքը արժանացաւ համաշխարհային ներքոյի։ Ամենքը խոստովանում են, որ սօցիալիստները միացած արմատականների հետ՝ փրկեցին հանրապետութիւնը, որին սպառնում էր իրական վտանգ։ Սակայն այդ կէտում ևս դէմօստորադիտիկ տնկում է ուղղափառ մաքսիստ Ժիւլ Գեդէլ, ասելով, որ նրա համար միևնոյն է լինի Փրանսիայում հանրապետութիւն, թէ Ալի-հէյմեան մի միապետութիւն... բայց մտեանդ աղանդաւորի այդ յայտարարութիւնը ևս լուրջ ուշադրութեան չ'առնուեց ոչ Ամստերդամի կոնգրեսում, ոչ էլ սօցիալիստական միջազգային դրակառութեան մէջ։

Գրէյֆուսեան տազնապին հետևեց ընթրումների մի կարևոր շրջան։ Հրապարակ նետուեց «գումարումների» հոչակաւոր օրէնքը, ուղղւած կղերի հօգի ու համատարած տիրապետութեան դէմ։ Մի մութ ու բռնակալ ուժ, որ գինւած միջնադարեան գէնքերով ու նիւթական ահուելի հարստութեամբ բթացնում էր ամբողջ սերունդներ, իր յետադէմ ու թունաւոր կրթութեամբ ու դաստիարակութեամբ և բացի այդ ամենազօրեղ կուսան էր հանդիսանում բոլոր մութ, հակահանրապետական, դաւադիր ուժերին։ Մի հսկայական կռիւ էր բորբոքել կղերական և աշխարհիկ ուժերի մէջ, մի կռիւ որ տևեց տարիներ։ Ի՞նչ տակտիկա պիտի ընդունէին սօցիալիստները... բնականաբար, նրանք պէտք է օգնութեան դային այն տարրերին—թէկուղ և բուրժուա—որոնք ուզում էին մի անգամ ընդմիշտ ազատել Փրանսիան այդ մութ ուժերից, ջանախառն կղերական հիդրան, սահմանել աշխարհիկ ու դէմօկրատիկ դպրոց ու կրթութիւն։ Այդպէս և վարեց Ժօրէսի կուսակցութիւնը Փրանսիայում, հակառակ միւս «յեղափոխական» գեդիստներին՝ որոնք կարծում էին, թէ փակելով վանական ա-

մուկ կղզիացման մէջ, սօցիալիստական դործ էին կատարում: Պայթեց յետոյ մի ուրիշ մեծ ու հրատապ խնդիր— եկեղեցու և պետութեան զատման խնդիրը, որ նոյնպէս պատկերաց յաղթանակով, շնորհիւ նոյն սօցիալիստական գործակցութեան:

Ահա անիկ սկզբունքի կամ կուզէք տակտիկայի ծանրակշիռ հարցեր, որոնք ծեծւեցին Ամստերդամի պատմական վիճաբանութիւնների ընթացքում, որ դժբախտաբար այսպէս անւանւած «անհաշտները» «յեղափոխականները» ցոյց չը տւին ցանկալի չափով անկեղծութիւն: Նրանց ներքուստ բառամով ընկալուցիծանարկովն է, թէ և իրականութեան մէջ նրանք ընդունակ են նոյն «օպորտունիստ» քայլերի անելու, որ նրանք բարդում էին իբրև յեղադրանք իրենց հակառակորդներին վրայ: Քանի՜ դէպքերում այդ նոյն դեմոկրատները այդ նոյն դեմոկրատական սօցիալ-դեմոկրատիան լողացել էին օպորտունիզմի ջրերի վրայ: ՔՐԼ-ը մար, որ իր համախոհներով քեզարկել էր անգամ բեղէն բաւարական լանդտագի մէջ՝ մնում է Բէբէնների ու Կառուցիկների շարքերում: Նոյն յարգած ու պատկանելի ուժը: Բանդէի լանդտագի երկու սօցիալիստ անդամները, որոնք մասնակցել էին Մեծ Իշխանի թաղման հանդեսին, — մնում են նոյն շարքերում... Իսկ Կառուցիկն հրահանգում էր դուրս վանտել Փրանսիական սօցիալիստական կուսակցութիւնից... Ժօրէսին:

Այս բառամով «յեղափոխականութիւն»: Իրօք բոլորն էլ «օպորտունիստ» են, եթէ հասկանաք այդ բառի տակ կօմպրոմիսներին, իրաւաստութեան քաղաքականութիւնը Գերմանական սօցիալ-դեմոկրատիան, որ մի ժամանակ յանձին իր կատաղի «կարմիրներ» դատափետում էր ամեն մասնակցութիւն սօցիալիստների կողմից պրոլետարական լանդտագի ընտրութիւններին, այսօր մասնակցում է ամենայն եռանդով այդ ընտրութիւններին, և յաղթական ծափ է զարկում, որ եթէ հոգի սօցիալ-դեմոկրատներ կարողային ներս թափանցել առաջին անգամը ինկերական ընկալիչի այդ միջնաբերդը... Եւ բազմաթիւ նման օրինակներ:

Այդպիսով առաջ է դալիս ըմբռնումների մի կատարելալ շփոթութիւն: Որտեղ է վերջանում բուն «յեղափոխական անհաշտութիւնը» և որտեղ է սկսւում լիուրամորթ «օպորտունիզմը»: Ո՛ր է առհասարակ Գեղի պաշտպանած «Ս ե Ղ ա փ ո խ ա կ ա ն ս ի ս տ ե մ ա տ ի կ օ պ օ զ ի ց ի ա ն»: Նա մի կատարելալ առասպել է ուսուցիական և ուրօծնական: Ոչ ոք չի կիրառում այն, ոչ իսկ գեղիստները: Բուն սօցիալիստական խելացի տակտիկական դարձեալ կայանում է ոչ վանական մեկուսացման մէջ, ոչ անպտուղ ու մեղկ ձեռնպահութեան մէջ, այլ գործօն միջամտութիւնների ու յարատե կուռի մէջ, — կուռ այն բոլոր պատենչներն ու պատուհանների դէմ, որոնք թուժք են կանգնում համաշխարային պրօպրիետի ու սօցիալիզմի յաղթական աւազակազարկութեան դէմ: Այդ կուռի մէջ սօցիալիստական կուսակցութիւնը մի վայրկեան անգամ չը պէտք է մոռանայ իր վախճանական ի դ է ա լ ն ե ը ր և դ ա ս ա կ ա ը դ ա յ ի ն տ ե ս ա կ է տ ը: Նա մի վայրկեան անգամ չը պէտք է ուրիշ կուսակցութիւնների հետ, այլ ի հարկին ձեռք տալով նրանց պիտի պահպանէ յար և միշտ իր ավտօնօմ, առանձնայատուկ կերպարանքը: Եւ այդ անհրաժեշտ պահանջը շեշտում էր Ժօրէս Ամստերդամի իր ճառի մէջ:

«Մենք կրկնում ենք անդադար, որ անհրաժեշտ է, որ պրօլետարեատը լինի դասակարգային կուսակցութիւն, մի կուսակցութիւն, որ ինքնօրէն է, որ աւտօնօմ է իր նպատակով, իր կազմակերպութեամբ, իր միջոցներով: Աւտօնօմ իր կազմակերպութեամբ՝ քանի որ այն ընթացիկները դէնք, որոնք կարող են մեղմել կապիտալիստական հասարակութեան պատուհաններն ու արտաները, նա հետամտում է մասնաւոր սեփականութեան լիակատար վերացման և համայնականի հաստատութեան: Նա ձգտում է արմատից պուկել կապիտալիզմի բոլոր ձևերը, ընտան, վարձ, շահ կայն

վերաբարձնել աշխատանքի բոլոր արդիւնքները կազմակերպւած աշխատաւորների հաւաքական ամբողջութեանը: Եւ իր նպատակին հասնելու համար, սեփականութեան յեղաշրջման համար՝ նա ուզում է, որ իւրաքանչիւր ընթացիկ միայն թեթեւացնէ տառապանքները, այլ և աճեցնէ պրօլետարիատի մտքի ու գործողութեան կրողը, էներգիան... Հանրապետութիւնը աղատւած, հանրային ազատութիւններն ապահովւած, կրթութիւնը աշխարհակոնսպած, պետութիւնն ու եկեղեցին բաժանւած, ապա հարկային սխտեմի բարձրում, աշխատաւորական օրէնքներ—այս բոլոր բարենորոգումները աստիճաններ են միայն՝ բարձրանալու համար դէպի լիակատար ազատագրութիւն, հասնելու համար ճնշւած աշխատանքի յեղափոխական նպատակին: (Ճափահարութիւններ):

Եւ լինելով ինքնուրոյն մեր նպատակով, մենք միևնոյն ժամանակ ուզում ենք լինել ինքնուրոյն մեր կազմակերպութեամբ: մենք քարոզում ենք շարունակ պրօլետարիատին՝ կազմակերպւել քաղաքականապէս ու տնտեսապէս, իբրև մի կուսակցութիւն, տարբեր միւսներից, բայց ոչ իբրև կղզիացած մի մարմին, ինչպէս երևակայում են աղանդաւորները, ոչ կղզիացած իր շրջապատող միջավայրից, այլ կազմակերպւած ուրոյն ձևով, որպէսզի կարողանայ օգուել գործողութեան այն բոլոր միջոցներին, որ տալիս է այն պատմական միջավայրը, որի մէջ նա գործանում է»:

Այս խօսքերի մէջ ամփոփւած է բուն սօցիալիստական credo-ն, դաւանանքը, այստեղ ձևակերպւած են սօցիալիզմի այն մեծ հիմնական սկզբունքները, որ անհրաժեշտ է միշտ ունենալ աչքի առջև բոլոր երկրներում, գործելակերպի, տ ա կ տ ի կ ա յ ի այն անվերջ ալիստականութեան մէջ, որ պայմանաւորւում է տարբեր երկրների ու միջավայրերի առանձնայատուկութիւններով:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ԲԱՂԷՇԻ ՎԻԱՅԷԹԻ ՎԻՃԱԿԸ 1907 ԹԻԻՆ

III

Մ ա հ մ ե տ ա կ ա ն ա մ բ ո լ ւ ը.— Գարեբէ իվեր թմրած մահմետական խուժանի ցասման բռնկումները, դէս ու դէն, չէ կարելի ըսել թէ նշաններ են գիտակցական զարթնումի: Թիւրք ժողովրդին այդ շարժումները, եթէ գաղափարային հիմ ունին, Էրզրումի և Գաստեմունի մէջ, բայց ոչ երբէք Բաղէշի մէջ:

Հոս խուժանը անգիտակ, այսեռած և տարերային հոսանք է: Անոր առաջնորդերը, շէյխերը, կը կազմեն մի պատկառելի դասակարգ, զուրկ ուէ կրթութենէ և բարեխղճութենէ, անհաշտ առեկութենով լարւած իւրաւոր դէմ շահախնդրական գծուծ նկատումներով ու ախտերով: Շլացած իրենց ըրպէական յաջողութենէն, քանի մը ամիս հակախնդր դեր ունեցան կառավարութեան գործերու մէջ, բայց երբ այժմու փոխվալին, Սղերգի միւթէսարըժը եկաւ և շարք մը ուժգին գործադրութիւններով վերահաստատեց համիտական ընթացիկը, իրենց որջերը քաշեցան այդ կանաչ գլուխները, օրէոր ձերբակալելու վախէն հալածւած:

Շէյխերը և թիւրք մասսան, ընդհանրապէս գաղափար չունին իրենց հայ հարեանների անցեալի և ներ-

կայի մասին, բնաւ չեն հետաքրքրւիր անոնց կեանքով և հետապնդումներով, ընդհակառակը կընային մոլեռանդութիւնով, կարհամարեն հայերը, կը նպաստեն անոնց տառապանքին, առանց հեռատեսելու թէ այդ բախտը իրենց ալ պիտի վիճակւի շուտով: Յարաբերութեանց և առևտուրի մէջ անոնք գործ կը դնեն բարբարոս ուժ և ճնշող անիրաւութիւններ, նկատելով հայը իբրև ստրուկ և անհոգի արարած: Մշոյ մէջ աւելի զօրեղ և արմատական հանգամանք ունի հակաքրիստոնէական զգացումը:

Տիրապետող դուրսութենէն օգտուող և հարստութիւն դիզող շարք մը հաճիներ ամէնքն ալ ծանօթ իրենց վայրենի արարքներով, սկսեալ քաղաքապետ Խալիլ էֆէնտիէն և հաճի Նիսալիէն մինչև հարկահան գազան Արապ Ապտուլլահը, պարագլուխներն են ամբողջին մէջ հակահայկական կոյր բնազդները արծարծելու: Հայերը կը մնան փարիաներ և արհամարելի թիրաքերու աչքին. կառավարութեան ուզածն ալ այդ է:

Ա ն ի շ ի ա ն ու թ իւ ն Ս Ղ եր դ ի շ ր ջ ա ն ի ն մ է ջ.—Տիրող անիշխանութեան աննպաստ հանգամանքներէն օգտուեցան քիւրդ աւազակները և ամառնային ամիսներուն, սպանութիւնից, հրձիգութեան վայրի փոխեցին Սղերդի շրջանը, ուր աւազակապետ Չաթօ Պէշար քանդեց Խարզանի անդորը գիւղերը. քանիցս կողոպտեց Տիգրանակերտէն Պիթլիս դիմող կարաւանները: Քիչ հեռուն Պոստանի հովտին մէջ ժիլեանցի, հասնակցի, պաթվանցի և այլն, քիւրդեր ցեղային վրիժառութիւններով, անապատի վերածեցին Սղերդի և ճէզերէի միջև, քրիստոնէայ անտէր ֆիլտաններու գիւղերը: Պաթվանցի երկու ցեղապետները արիւնկղակ Ամարէ-Թամար և Մահմատի-Մստէ, 15 օրւայ մէջ քանդեցին ֆիլդաններու 22 գիւղերը, հրդեհելով տաճարներ ու տներ, կողոպտելով ամէն ինչ ու սպանելով կին, տղայ, ծեր ու քահանայ: Մնացեալ բնակիչները փախան Մուսուլ և ցրեցան հոս հոն: Վերջերս հազիւ մաս մը վերադարձած է գիւղերու մեծ մասը կը ներկայացնեն աւերակներու կոյտեր: Գժբախտ ֆիլտաններու սրտակտուր ողբերուն և անոնց հոգևորականներու բողոքներուն խուլ մնաց կառավարութիւնը: Արիւնի և հրդեհի շրջանը մերթ ընդ մերթ կը վերսկսի այդ կողմերը, միշտ զօհը ըլլալով ֆիլտանները և շատ չնչին փոքրամասնութիւն կազմող հայերը Խարզանի, Հիլվանաի Պէտվարքի մէջ և մի մաս թշուառայա քիւրդերը:

Ծամանակէ մը իվեր նոր տարր մը կաւելանայ ճընշող և հարստահարող ժողովուրդների վրայ, ոայա քիւրդերն են ասոնք: Համիդիէներ և բռնաւոր քիւրդեր զգալով թէ քամեր են արդէն հայերու կամ քիլտաններու կենսական հիւթերու վերջին կաթիլները, ուշադրութիւն կը դարձնեն ոայա քիւրդերու վրայ: Մէկ քանի օրինակներ:

Օգոստոսի սկիզբին Մանազկերտի մօտ հետաքրքիր տուամ մը տեղի ունեցաւ Համիդիէ գնդապետ Մէհմէդ Էմին պէյ, անխիղճ գազան մը, իր իսկ ձեռքով ստեղծած գրգռումի մը հետևանքով, յարձակեցաւ Աղվէրան քիւրդ գիւղին վրայ, սպաննեց 30 քիւրդ, կողոպտեց ամբողջ գիւղը, հրդեհեց տները և մզկիթը և

դիակները լեցուց ջրհորներու մէջ: Յարգ անպատիժ մնաց աւազակը շնորհիւ միւշիր Ձէքի փաշայի պաշտպանութեանը:

Գարձեալ նոյն ամսուն, Մշոյ դաշտին մէջ իր չարագործութիւններով հանրածանօթ պալաքցի հաճի ֆէրօն արտաքսեց Գեղձմիրտ և Ծղակ քիւրդ գիւղերու բնակիչները տասէն աւելի սպանութիւններէ և կողոպտումներէ յետոյ: Ընչազուրկ քիւրդերը թափուցան Արագ և Արբափանք հայ գիւղերու վրայ, տղերուկներու պէս ծծելով այդ թշուառ բնակիչներու արիւնը: Քիւրդը քիւրդին տունը քանդեց և պատասխանատուութիւնը ծանրացաւ հայուն վրայ: Արտաքսուած քիւրդերը տասնէ աւելի անգամներ բողոքեցին Մշոյ կառավարութեան, սակայն միւթէսարըֆ Սաֆէտ փաշան, մի պալատական լղրձուկ ներքինի, կաշառուած չարագործ հաճի ֆէրօյէն, ոչ մէկ կարևորութիւն չը տուաւ, և հայ գիւղացիներն են որ դեռ կը քաշեն այդ վայրագ քիւրդերի տառապանքները:

Հ ու ն ձ ք եր ը.—Վուսահալութեան քանի մը գաւառներուն մէջ շատ քիչ վարուցան եղած էր գարնան ծանօթ պատճառներով, և հունձքն ալ անյաջող եղաւ երաշտի պատճառով: Կանխահաս ցուրտը փճացուց Մշոյ դաշտի հունձքերուն մէկ մասը. խորունկ պարտքերու մէջ թաղած երկրագործներ հունձքերէն յետոյ ձեռնունայն մնացին: Սէլէֆի և տոկոսաւոր ծանր փոխառութիւններու հետևանքները տարեց տարի կը դառնան աւելի քանդիչ ու կորստաբեր, տնտեսական հաւասարակշուութիւնը արդէն կորուսած է հայ երկրագործին համար: Անդադրում և անհաշիւ հարկահանութեան յաճախադէպ կողոպտումներու ու պաշտօնեաներու կեղեքումներու առաջ բերած տնտեսական կացութիւնը, նօրմալ պայմաններու մէջ սպորոզ բաղաքացիներու ու գիւղացիներու համար անըմբռնելի է բացարձակապէս:

Հ իւ պ ա տ ո ս ն եր ն ի Մ ու շ.—Աշնան ամիսներն մասնաւոր ուշադրութիւն գրաւեցին հիւպատոսներու ներկայութիւնը Մուշ: Անգլիական հիւպատոսի յաճախակի այցելութիւնները, Գաշտի մէկ ծայրէն միւսը պտոյտները և ուսսական հիւպատոսի քառամսեայ բնակութիւնը քաղաքին մէջ վերարծարծեցին քիչ յոյս, բայց շուտով այդ յոյսերն ալ գացին միանալ իրենց յուսախաբ նախորդներուն:

Կ ո ղ ո պ ու տ ն եր կ ու ս ա կ ա լ ու թ ե ա ն ա մ է ն կ ո ղ մ ը.—Անմատչելի լեռներու կատարներուն թառած քիւրդերն անգամ կը դիտեն Բաղէշի կառավարութեան թոյլ ու անտարբեր վիճակը և իրենց ինքնածին սրադատութիւնով կըմբռնեն թէ իրենք կարող են անկաշկանդ հետևել իրենց տարեկան արշաւանքներուն, կողոպտել անմուռնչ հայ գիւղացիները և ամենագոյն դիմադրութեան պարագային գնդակահար գետին փռել զանոնք:

Առանց ուէ մեկնաբանութեան առաջ կը բերենք միմիայն աշնանային ամիսներուն մէջ կատարուած կողոպուտներն և հրոսակային աւարառութիւնները: Օգոստոս 10.—Չախարքի քիւրդեր տարին 30 ոչ-

խար և մէկ քանի գոմէշ Մշղէն (Մուշեղէն) գիւղէն (Մշոյ դաշտ):

Օգոստոս 17.—Հասնանցի համիրիէներ Սոխորգէն տարին 200 ոչխար, մէկ օր վերջ Տապա վանքէն 30 եգ: Սբուածորէն (Ախլաթ) 70 ոչխար և կողոպտեցին 3 տուն: Մէկ քանի օր վերջ Մեծքէն (Ախլաթ) տարին 25 կով:

Օգոստոսի վերջերը դարձեալ հասնանցիներ թեղուցէն (Պուլանըխ) տարին 70 եգ ու գոմէշ:

Սեպտեմբերի սկիզբին հասնանցիներ Պուլանըխի մէջ կողոպտեցին Ռրստամկէդիւկ հայ գիւղը, մասամբ կողոպտեցին Եօնձալու:

Սեպտ. 7.—Հայտարեցիներ Կծակից (Ախլաթ) տարին 300 ոչխար:

Սեպտ. 11.—Մօտկանցիներ յարձակեցան Բաղէշէն կէս ժամ հեռու Բարշէն հայ գիւղին վրայ, վիրաւորեցին 3 հայ, տարին 7 ոչխար: Երեք օր վերջ երկրորդ անգամ յարձակեցան Բարշէնի վրայ, տարան 40 ոչխար և վիրաւորեցին մէկ հայ:

Սեպտ. 19.—Մօտկանցիներ յարձակեցան Բաղէշէն 2 ժամ հեռու հայաբնակ Ծվար գիւղին վրայ, տարին 200 ոչխար, սպաննեցին մէկ հայ և վիրաւորեցին երկու հոգի:

Երրորդ յարձակում Բարշէնի վրայ, տարին նորէն մէկ քանի ոչխար:

Սեպտեմբերի վերջերը Մօտկանցիներ յարձակեցան Խախուկի վրայ տարին 20 ոչխար: Կորվու գիւղէն 30 ոչխար: Կամախի վրայ ևս յարձակեցան բայց գիւղացիներու կողմէն ետ քշեցան չախմախլի հրացաններով:

Բազմատանջ ժողովուրդը, համբերահատ և ոչ մի պաշտպանութեան յոյս չունենալով կառավարութեան կողմէ, դիմեցին ինքնապաշտպանութեան: Այսպէս մօտկանցիներ ետ մղեցան, երկրորդ անգամ Ծվարի վրայ յարձակման միջոցին:

Հոկտեմբերի սկզբին խութեցի քիւրդեր տարին Մօտկանի Մղակ հայ գիւղէն 400 ոչար:

Ծայր տւաւ մի բառային դրութիւն, զօրքեր և ոստիկաններ ծպտած կողոպտեցին Պուլանըխէն ցորեն ներածող հայերը, Տիարպէթիւրէն հասնող կարաւանները և ցորենը: Սև ամպեր կը խոնէին հորիզոններու վրայ և անկասկած պիտի պայթէր մի անօրինակ աղէտ, շուկաներու կողոպուտ և կոտորած, եթէ ուժգին կերպով չը միջամտէր Անգլիական հիւպատոսը, որ պահանջեց վախէն հսկողութեան տակ առնել շուկան և պահակախմբեր դուրս բերել պաշտպանելու Բաղէշ ուէ պատահականութեան դէմ: Այսօրինակ հանգամանքներու մէջ հեռւոր գաւառներու մէջ տիրող վիճակը հասկանալի է:

Մանրամասնօրէն չենք կարող յիշել աշնան ամիսներուն ծանօթ շաթօ Պըշարի անլուր ասպատակութիւնը խարզանի մէջ, ճիւղանցիներու և թելի շէյներու կողոպուտները ս. կարապետի վանքէն մինչև Մշոյ դաշտի արևելեան սահմանը: Չէրքէզ աղայի և Իսմայիլ աղայի կեղեքումները Վանայ ծովափին վրայ, որոնք քամելէ յետոյ ժողովրդին տնտեսական ուժերը, յանդգնեցան մինչև իսկ իրենց գիւղերէն ու տներէն բռնի արտաքսել ծովափի գիւղերու հայերը:

Ինչպէս ակնբեր կը տեսնուի, չը լուսած անապահո-

վութիւնը կը տիրապետէ կուսակալութեան ամէն կողմ աշնան ընթացքին: Որոշ ժամանակի մը համար իսպառ դադրեցան ամէն յարաբերութիւններն ու փոխանակութիւնները, որովհետև քիւրդերու կարաւաններն անգամ ապահով չէին կրնար քաղաք հասնել: Անիշխանութիւնը կատարեալ էր, ընթացողը կրնայ մտաբերել ինքնապաշտպանութեան միջոցներէ զուրկ ու արգելած հայը, մասնաւոր մինչև ատամները զինւած և գազանային բնագրներով օժտուած և օրէնքի բռնաբարման գրեթէ միշտ անպատասխանատու քիւրդերուն հանդէպ: Հացահատիկները և սննդեղէնները ընդհանրապէս սղեցին՝ մտահոգութիւն պատճառելու աստիճան: Անդադրում անձրևներ և կանխահաս ձիւնն հոկտեմբերի վերջ չը թողարեցին երկրագործին վարուցան ընել: Սովը անպայման պիտի գործէր մեծ նախճիր, եթէ ուժգին պահանջներու պաշտպանութեան տակ Տիգրանակերտի Պշէրի գաւառէն դէպի Մուշ և Բաղէշ չը թափէին ցորենի անվերջ կարաւանները: Սակայն գիւնները միշտ մնացին հասարակ և միջակ քսակներուն յոյժ դժբաղամատչելի աստիճաններու վրայ, և դեռ կը շարունակեն անստոյգ ապագայով, ամենակենսական պիտոյքներու զրկանքին ենթարկելով ժողովրդական մեծ գանգաւաններն ու գիւղացիները:

Կիւրին է հետևեցնել թէ ինչ շահ կունենան վաճառական խանութպանը կամ արհեստաւորը, երբ երկրագործ դասի 75 առ հարիւրը կապրի հունձքերէն անմիջապէս վերջ կնքելով ծանր տոկոսաւոր պարտքեր:

ՄՈՒՇ, մայիս 20

Տարօնի և Մասունի մէջ գազանացած բռնապետութիւնը անսովոր եռանդով մը նոր գործի է ձեռնարկել: Սուրի և սովի հարեւաններով իսպառ լուեցնելու ազատագրական շարժման հալածական մնացորդները: Պատերազմի առթիւ նորանոր բազմութիւն մը, պահեստի յուսահատ և քաղցած զինւորներն ու համիրիները, հրոսակներու և ջանքեգարներու խմբերը, պատերազմի ուրականէն վշտացած ու սարսափած թիւրք ու քիւրդ ազգաբնակչութիւնը, նոր և մեծ ազդակներ են տիրող ըէժիմին աջողութեանը, գրգռելու ամբոխային ազգայնամուտութիւնը և կրօնամուտութիւնը հայ ժողովրդի և հայ յեղափոխութեան դէմ, որը կը համարին իբր պատճառ ուսական արշաւանքի որուն, համոզւած են թէ չեն կարող դիմադրել: Թիւրք ժողովուրդը ակամայ ստիպւած է կորստաբեր պատերազմի հրամանը լսել և աժմէն սկսած են շինծու լուրեր տարածել որ իբր թէ յեղափոխականները պատերազմի պատճառ դառնալով կուզեն ներսէն ձեռնարկել մեծ ապստամբութիւն, որուն համար 5,000 հայ Ֆէդայիներ և ուսական սպաներ սահմանը անցնելով Տարօն կը քալեն, հետևաբար մեծ հսկողութիւններու պատրաստի տակ աւազակները, խուզարկու խմբերը շատցուցին: Այս վերջինները հետզհետէ կաւելանան, որպէսզի կուի ատեն երկրի ներսը պահպանելու պատճառանքով պատերազմի չը գնան և էշնահատակ ըլլան, քանի որ կարող են անգէն հայերը սարսափեցնել: Կառավարութիւնը իր շահի տեսակէ-

տէն կը շահագործէ այդ ներքին շինծու ապստամբութեան խնդիրը, ամբոխի աղբախն, կրօնամոլ զգացումները գրգռելու և զէնքի տակ հրաւիրելու համար: Պատերազմը այդպէս ստեղծում կազդէ և այժմէն կը յայտարարեն որ իրենք յիմար չեն որ ռուսական թընդանօթներու բերանը երթան և մծադրած են փախչելու պատճառ եղողին և հրաման տուողին հերք: ըսելով:

Գիւղացի աշխատաւոր ժողովուրդի հալալ աշխատանքի, վաստակի ժամանակն է, բայց գիւղացիութիւնը մեծ մասով անսերմնացան, անյուծ շարքեր մնացել է, մինչդեռ թահսիտարները, պարտատէրերի կեղեքիչ վոհմակները և այլն և այլն կշտապեն քաղաքական հալածանքին միացնելու, տնտեսական հարւածը Տարիներէ ի վեր սովալլուկ գիւղացիութիւնը այժմ ստիպւած է զրկել իր բրտինքով մշակած հողի վաստակէն: Չկրնալով բաւականացնել միանգամայն իր անսիրտ կեղեքիչներու և իր ապրուստի պահանջը, յուսահատ ստիպւած է ծախել իր մայր վաստակը, հողը, լուծքը, մաշն ու միւլքը: Իսկ եթէ ճշտել նոր օրէնքը որով իբր թէ աշարը պիտի գրամի վերածուի (ընդունելով գիւղերու մի քանի տարւայ աշարի միջին թիւը) և ձգելով գիւղերու վրայ, հաւասար պիտի բաժնի հարկերու վրայ և գանձել, առանց նայելու թէ գիւղը այս տարի ինչքան և ով վարուցան ըրեր, և ինչ չափով:

Կամ թէ չէ միջին թուով ընդունւած աշարը պիտի ձգուի գիւղի հողերու վրայ և հողատէրերէն պիտի գանձել հարկին հետ միասին: առանց նայելու թէ այդ հողերը ցանա՞ծ են թէ ոչ: Այն ատեն հայ գիւղացու դրուութիւնը աւելի ու աւելի յուսահատական կը դառնայ:

Երկու պարագային ալ այդ օրէնքը, ուրիշ բանի չձգտիր բայց եթէ հայ աշխատաւոր գիւղացին հողագործի ընելով, հողերը կարողութիւն ունեցող աղաբէկներին յանձնել: Կախ «օրէնքով» զրկել հայ ժողովուրդը հողեր մշակելու կարողութենէն, միջոցներէն և ապա կրկին «օրէնք» պահանջել որ ան հողերը մշակէ և արդիւնքէն բաժին հանէ կառավարութեան, իսկ եթէ միջոց չունի հողը ծախել, թողու միջոց ունեցողներուն:

Գարուն է, աշխատանքի ժամ է, բայց կառավարութիւնը այդ ինկատի չունի, որովհետև ինքը պատերազմի պատրաստութեան մէջ է: Պահեստներ է հաւաքած և կը հաւաքէ առանց առաջուց անոնց ուտեստի մասին հոգալու, այժմ ալ սկսել է ուտեստ ձարել գէթ օրական մի բան տալու իւրաքանչիւրին: Բայց քարուքանդ եղած երկրում, հաց ապրուստ չը կայ: Միւս կողմէն անօթի փորը չը լսեր: Ուստի կառավարութիւնը դարձեալ «օրէնքով» հայու օձիքէն կը բռնէ Գաշտի գիւղերը սկսած է խուզարկութեան ենթարկել ցորենի ամբարներ բռնելու և եղած չեղած սերմցունքը կողոպտելու համար, որը հայ գիւղացու զոյգ, կէստեղներովը, սայլերովը կը կրէ քաղաք, ուր սակայն, հարիւրաւոր թիւրք ամբարատէրեր կան և հրապարակաւ կօտը 28—29 շրջի (?) կը ծախէ հայ գնողին — մէկ երկու շրջ ալ աւելի հային համար. և անկէ սկիին 108-ի տեղ 107 շրջ: ընդունելով:

Կառավարութիւնը աչք կը փակէ հարիւրաւոր

թիւրքերու ամբարներին առաջ, որոնց ձեռքն է քաղաքը, և այդ շրջանը: Չանոնք գրգռել իբր թէ անխոհեմութիւն կը սեպէ կառավարութիւնը, թէ անկարելի չէ որ փոխանակ սովահար ժողովուրդը արիւնքամ ընելու՝ աղաներու գիղւած ցորեններու ամբարները բանայ:

Մայիս 14-ին կնքեցին գերման-հայ որբանոցի ընդամենը 200 քիլէնոց ամբարը, առանց նայելու անոնց կողքի հազարանոց ամբարները: Տիգրանակերտի սահմաններէն կրելիք ցորենի օլամի համար, հայ գիւղացին և անոր եղները պատրաստ են, մինչդեռ թիւրք արտօնեալ իշապաններու էշերը, ձիերը ազատ են. (հայերը զուրկ են և ձիապահութիւնով պարտապելէ, այդ մենաշնորհը թիւրքերինն է): Կառավարութիւնը չհամարձակիր արտօնեալ էշեկճիներուն օլամի տուր: Չէ որ թիւրքութիւնը պատերազմի ասիթով գրգռուած է, ինչպէս կարելի է անոնց ձեռք տալ և ի՞նչ օրէնքով:

Քաղաքի արհեստաւորութիւնը և առևտրականութիւնը զերծ չէ տնտեսական հարւածներէն: Պատերազմի պատճառով առանց այն ալ կասկածելի ճանապարհները այժմ բոլորովին վտանգաւոր են դարձել, կարաւանները կանգ առել և ապրանք չեն փոխադրեր, Մուշի մէջ ապրանքներու ամբարներ չըլլալով՝ ամէն ինչ թանկացել է առևտուրը կանգնելով: Իսկ թիւրքերի և հայերի մէջ կայ բռնի առևտուր, ճիշտը առևտուր: Մանր արհեստաւորները և առևտրականները հաշիւին մարքեցին: Ուրիշ ձար չը կայ, բայց եթէ վաստակաւոր քաղաքներ երթալ, ինչպէս կարին:

Ընդհանուր ժողովուրդը լքուած, յուսահատած, կարողները մեծ բազմութիւնով Ամերիկա կը գաղթեն չքաւորները կը պատրաստեն դուրս փախչելու իսկ ընդ. հայ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը նորէն կսկսի յուզել ընդհ. գաղթի, օտարահպատակութեան և կրօնափոխութեան դժնէ հարցը:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, 14 Յուլիս:

Կառավարութիւնը անխղճօրէն կը շարժարէ հայ ժողովուրդը որ զէնք չի յանձնել, պէտք է յանձնել նոյնիսկ եթէ չունենաս: Ցանջանքի և ստեղծմի տակ ժողովուրդը սկսած է զէնք գնել և յանձնել շատեր կը մեռնին, պակաս չեն և ինքնասպան եղողներ զէնք և միջոց չունենալնուն համար: Կարծես իր հրէշութիւնները պարտելու և ապագային անմեղադիր մնալու համար, կառավարութիւնը այժմէն փաստեր կը հաւաքէ հրատակելով ցուցակը բոլոր գիւղերուն որոնք իբր թէ զինուած էին մեծ ապստամբութեան մը համար:

Բախեցիկ գիւղացի երիտասարդ մը ծեծի չը դիմանալով կը յայտնէ թէ ծովեզերքը (Արջակու ծով) զէնք մը պահած է, ոստիկանները կառաջնորդէ մինչև ավիլ և հոն ինքզինք ծով նետելով կը խեղդուի: Արովհետև զէնք չունէր, դրամ ալ չունէր նորը գնելու, դժոխսային տանջանքներէ ազատելու համար այդ կարուկ միջոցը խորհած էր ալիքներուն մէջ գերեզմանը փնտռելով:

Ապաղայի հայ ժողովուրդը տանջանքներու տակ կը տապալուի: Թշուա խաչէնցիներու քաշածը երևակայութենէ դուրս է: 7 մարդ մեռան, ոմանք մեռան ծեծի

տակ և ոմանց ալ ոտքերը բեկուելով և տաղելով մեռցուցին: Անբարոյականութեան սահմանը չը կայ: 100 զօրք 10 օր շարունակ անլուր բռնաբարումներ կատարած են գիւղացուհիներու վրայ: Շատ փոքրիկ աղջիկներ մեռած են լլկանքի հետեանքով: Յիսուսէն աւելի կիներ նւաղած են:

Կառավարական խուզարկու խուժը Թիմարի մէջ վերջացնելով իր գործը՝ անցած է Հայոց Ձոր և այնտեղէն 500-է աւելի հրացան ձեռք բերած է:

Խաչէնի տէր համիդիէ գայմագամ Մահմուդ Սադրզ ընդհարում ունեցեր է խուզարկուների հետ: Մահմուդ պէյ միւղդիրին հետ կուր բռնուելով վերջինը կտուրէն կը գլորի և ոտքը կը կտորի, ըստ ոմանց հայ կին մը բռնաբարել ուզեր ան կտորեր է: Այժմ Մահմուդ պէյ բողոք ըրեր է էրբեանը հարպի անկարգ խուզարկուներուն դէմ. բանակցութիւնները կը շարունակին՝ Միւղդիր Զէքի փաշայի և համիդիէ գայմագին միջև, բոլոր քիւրդերը ելքին կսպասեն:

Կառավարութիւնը օգտուելով Մահմուդ և Մուստաֆա պէկերու թշնամութիւններէն, կաշխատի վերջ դնել Ապաղայի կիսանկախ դրութեան. հաստատելով օրինական տուրքերը, այդ պատճառով քիւրդերը շարունակ կը գաղթեն դէպի Մաբւի հողը:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն



Ջ Ա Ի Է Ն
(Յարուսիւն Սարգսեան)

Վանի վերջին մեծ դաւաճանութիւնը և անոր հետեւող մեծ կորուստներն ու դէպքերը թոյլ չը տան իր ժամանակին գրեւոր Մշտը դաշտում ընկած մեր երիտասարդ ընկերոջ՝ Չաւէնի մասին:

Չաւէնը պատկանում էր Արվիասեան այն բայցաւիկ ու գաղափարական ինտելիկենցիայի շարքին, որոնք յանձն են առնում զոհողութիւններ, գայլու հալածանքի ու տառապանքի դատական հայրենիքը, բարբառելու ազատագրութեան սրբազան կայծը...

Նա բնիկ Գանձակեցի էր, միջին կարողութեան տէր ընտանիքի զաւակ. սիզբնական կրթութիւնը ստացել էր իրենց քաղաքի ուսանական քաղաքային դպրոցում, ապա անցել է Էմիթի Գեորգեան ձեմարանը, ուր նա եղել է ըմբոստների առաջին շարքում: Աշակերտները առաջադրել էին մի շարք պահանջներ, որոնք արմատապէս աշխարհականացումի՝ հարցը դնում էին կղերական վարչութեան... կրօնական անհամբերողութեան սգին չը ներելով այդ ըմբոստութիւնը՝ ծաղիկ երիտասարդութիւնը արձակեց դպրոցից «վան ըմբոստ վարուց»:

Չաւէնը չէր կարող առանց դպրոց մնալ. ձեմարանէն անցաւ Երևանի թեմական դպրոցը. բայց հոն էլ հանգիստ չունի, այնտեղ էլ պայթում է աշակերտական դժգոհութեան ուռմբը: Չաւէնը դարձեալ ըմբոստներու մէջ է: Այս 1905-ի ըմբոստացումը բոլոր սեմինարիաների, մասնաւորապէս Երևանի սեմինարիայի պատմութեան մէջ մնում է նշանաւոր: Վերջապէս հասարակութեան ազդու միջամտութեամբ դպրոցը վերադարձուցում է:

Չաւէնը աշակերտական կեանքէն իր շուրջը հաւաքած է որոշ գաղափարական աշակերտներ. նրա սենեակը եղել է գաղափարական վիճաբանութիւնների, ոգևորութեան ու իտէալական ծրագիրներ կազմելու վայր: Աշակերտական սեղանից իսկ մասնակցել է յեղափոխական գործին հէնց

Գաշնակցութեան միջոցով. նա եղել է պրօպականդիստների շրջանակի լաւ անդամներից մէկը...

Բայց Չաւէնի դէմքը աւելի սրտը կերպով պարզեց ու ձևաւորեց բուն երկրում:

Գպրոցը աւարտելու առաջին տարին հարց է դնում երկիր մտնելու 1906-ի սաւառը արդէն Ս. է, ուր մնում է մի առ ժամանակ սիզբնական փորձառութիւն ձեռք բերելու: Նրան միտ յիշում էն իբր իրենց սիրելի ուսուցիչներէն մէկը: Ս...-ի բոլոր դիւզայիք, մանաւանդ տանջուած աշխատաւորութիւնը լաւ կը ծանչնայ «հողի և աղատութեան» երիտասարդ պրօպականդիստ-սոցիալիստին:

1907-ի մարտին երկիր ընկերներու հրաւերով նա ճանապարհւում է դէպի Վան... ով ծանօթ է Տաճկահայաստանի ձմրան, ով կեանքի մէջ դէթ մի անգամ դժբախտութիւն կամ երջանկութիւն է ունեցել յեղափոխական դպրոցի ճանապարհ գնալու, այն էլ ստով 7-8 օր շարունակ, նա միայն կարող է ըմբռնել այն տանջանքներն ու գեղամարդիային համբերութիւնը, որով 20—21 տարեկան մի երիտասարդ, փափուկ կեանքին սովոր մարդը կարող կը լինի յաղթանակել ու հետնել իր նպատակին: Միշտ սարսափով ու մեծ հիացմունքով կը պատմէր իր քաջած նւթութիւնները, մինչև կուրծքը ձիւների և ջրերի մէջ հագուստով քայլելը և դրան ուղեկցող գաղափարական երազները: Անանձնապէս շեշտում էր այն անհեթեթ թէօրիստն որ Արվիասեան երիտասարդութեան որոշ շրջանում շաբէն կերպով բերնէ-բերան պտոււում էր, «որ իբր թէ Գաշնակցութիւնը իր գործունէութեամբ միայն, այն էլ դիտակցաբար, ծանայում է կովկասեան բուրժուադիայի շահերին նրա համար բանալով մի արդիւնաւէտ շախայ Տաճկահայաստանում...»: Չաւէնը չէր հանդուրժում աշխատաւոր ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրման համար այսքան տանջանքները, զոհողութիւնները վերագրել այդ անհեթեթ մտածումին:

Չաւէնը Վանում, շուտով ցոյց տուց իր կրակոտ պրօպականդիստի կարողութիւնը, և ստեղծում է մի մեծ երիտասարդական հասանք, որը մկրտում է «Նոր-Սերունդ» անունով: Չաւէնը այս շրջանի լաւագոյն աշխատող ուժերից մէկն էր, և միայն տարւած էր իր սիրած պրօպականդի գործով: Նա օժտւած էր եռանդով և բազմակողմանի ընդունակութիւններով, նա գիշեր ցերեկ քաղաքում և գիւղերում, լեռներում և հանգստութեան վայրերում գիրք ձեռքից վայր չէր ձգում, գէնքին հետ, և որ աւելի կը դեղեցկացներ զայն՝ անոր յեղափոխական շիտակութիւնը, մանաւանդ անկեղծութիւնն էր:

Ամառը ձգելով քաղաքի համեմատաբար տանելի կեանքը նետուեցաւ ժողովուրդի խաւերուն մէջ, Ասպուրականի գիւղերում, ուր կը տանէր պրօպականդի և կազմակերպական գործերը:

Չաւէնը Գաշնակցական երիտասարդութեան թափով ձգում է դէպի աւելի մութ ու խաւար անկիւններ, դէպի այն վայրեր, ուր պահանջում է աւելի մեծ վտանգ և զոհողութիւն: Մշտ դաշտը այդ տեսակետից ամենտոկայնակալն էր: Տաճիկ կառավարութիւնը իր յուրի թէօրիստ մտքով թոյնը թափում էր այդ ժողովրդի զլխին, և եւկիրը դարձել էր դժոխք: Չաւէնը նետուեցաւ այդ վայրը, իր հետը առնելով զէնքը և իր սիրած գրքերը... «մնաք բարեաւ... Անհունապէս երջանիկ եմ դնալու համար»: Ահա նրա վերջին խօսքերը...

Եւ մի քանի շաբաթից յետոյ բոթաբեր լուրը... Չաւէնը, Սէյդօի և Ջնդօի հետ, տմարդի կերպով զոհ դառնած են Ասաբ մպէի դաւաճանութեան, հէնց իր տանը դաւաճան պէի հետ տեսակցելու ժամանակ: Եւ այսպէս գաղափարական երիտասարդը 29 տարեկան հասակում դերեզման իջաւ օտար, բայց պաշտուած հորիզոններու տակ...

Յարգանք պարտականութեան դաշտում ընկնողների յիշատակին: Ծուռն սիրելի Չաւէնի անշիրիմ նշխարների առաջ թող ծնողները բանաստեղծի ասածի պէս լան և ընկերները Չաւէնի պէս մերամարդութեամբ երգեն
«Լաց մերիկ ջան, որ էլ չեմ գայ,
Աէրքս խորն է տուն չեմ գայ»...

ԱՐՄԵՆԱԿ ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ
(Զ ա լ է Ն)

Արմենակ իր կորովի և իր տառապող ցեղին հարազատ զաւակն էր, որու մահւան պարագաներուն մէջ տիրող դիժոր և ոգին անձնւիրութիւնն է իր հերոսական բարձրութեանը մէջ:



Բնիկ Շապին Գարահիտարցի էր և բարեկեցիկ ու բարի ընտանիքի մը զաւակ, սակայն իրենց վաճառատան և ջազացքներու հրդեհհուժով այդ երբեմնի փայլուն ընտանիքը

իր նախկին վիճակը կորսնցուցած և մինչև իսկ դժբախտացած էր:

Արմենակի մանկութեան մէջ արդէն կը նշմարուի անոր մէջ տիրող ուժեղ և համակրելի դժերը. ըմբոստ և յանդուգն ոգին և դէպի իր ընկերները ցոյց տուած սէրը նոյնիսկ ամենածանր վտանգներու ատեն: Օր մը դպրոցին մէջ կը տեսնէ երկու ժամանակացոյց թիւրքերէն և հայերէն, առաջինը յատուկ և կեղծաւոր խնամքով մը գեղադուած դասատուին կողմէ և բարձր տեղը կախած, իսկ հայերէնը աղտոտ ու խեղճուկրակ և անշուք տեղը դուրս: Արմենակի արդարավրէժ հոգին չհանդուրժեալ այդ նախատինքը իր մայրենի լեզւին, և հայերէնը իր արժանաւոր տեղը կը դնէ:

Գաղտնապահութիւնը, Արմենակի նկարագրին էն բնորոշ դիժը և գրեթէ տեսակ մը բնածին դաւանանքը եղած է: Ինչ որ կընէր—և շատ բան կընէր—ոչ վարժապետները կիմանային ոչ իր ծնողքը:

Հայրենիքէն ելլելով մէկ երկու տարի Վիրասունի դպրոցը մնաց: Քանի կը զարգանար և կը խելահաստէր լուրջ ու յեղափոխական ընթացումներու ազդեցութեան տակ, իր զգացումները կը ձևաւորէին և իր ձգտումները հաստատ իդէալներ կորսնէին: Անոր զգայուն հոգին ազգային իդէալը ընտրեց որ փշէ պսակը ունէր իր ճակատին վրայ: Երբ Սև ծովը անցաւ և եկաւ Պոլիս իր էութիւնը աւելի թրծւեցաւ:

Սուլթանի մահափորձի ատեն, արդէն յեղափոխական շարքերուն մէջ մտած, ընկերներու վրայ բարոյական և խրատուիչ կշռող ազդեցութիւնը ունեցաւ. կը կրթէր զանոնք շարքաշուրթեան համար, անձնւիրութեան համար, հերոսութեան համար որուն հոյակապ օրինակը ինքը պիտի սարսափէր:

Մինչև վերջը մնաց գաղտնապահութեան հիանալի մարմնացումը. և ի՞նչ ճարպիկ ընդունակութիւններով խոյս կուտար լրտեսներու աններող կասկածներէն: Երբ զնդանին մէջ գազան կառավարութիւնը անլուր չարչարանքներու տակ ուզեց գաղտնիքներ խլել Արմենակէն, սա հնութեան հերոսին պէս կամ պէտք էր լեզուն խածնէր փրցնէր կամ մահւան մէջ անմահանար: Արմենակ վերջինը ընտրեց, դիւցազնի մահով մը ողջակիզեց իր կեանքը 22 տարեկան շքեղ հասակին մէջ, իր գաղափարին և նկարագրին բովանդակ ասուածացումով:

Արմենակ բացառիկ տիպար մըն էր անոնցմէ, որոնք յեղափոխական կրկեսին մէջ իրենց վճռական քայլերուն հետքերը կը ձգեն և ցեղին կորովը կընդդժեն և միանգամայն Նիցչէի հերոսներուն պէս մահւան համար կը հատուանան մարտնչելով...

Հ Ա Յ Ո Ր Դ Ի Ն Ե Ր Ը

XVII

Կ Ա Մ Ք Ի Մ Է Ձ Դ Ի Խ Յ Ա Ձ Ն

Մարդուն մէջ ամենէն գեղեցիկը, դարձեալ,
կամեն է:
ԳԻԿՍՐՏ

Լսեցէ՛ք, սարկութեան տակ վատորէն ծուած կամ բռնութեան դէմ բռունցք շարժող ժողովուրդներ, Լսեցէ՛ք, է՛ս, այսօր, ձեզ կուսակիցէ կամք մը պիտի երգեմ և տիտանեան անուն մը աւետեմ, Գարեբուն մուրը մաքրող, պատմութեանց ոսկին նորոգող Հայրդիին պիտի երգեմ, Ճակատամարտներու ճամբուն վրայ կանգուն զինուորներ, կամ ապշահար յուսահատներ, լսեցէ՛ք:

Կեանքի հովիտէն քալող երկու օրուան անցորդներ, դուք վտեմներ կամ վատեր, հերոսներ և հսկաներ, Թափառիկ կամ փարթամ, մակաբոյժ կամ իմաստուն, իշխան և աշխատաւոր, յոգնած կամ գերազօր, Արգարասէր կամ շարափտ, և գերիներ և գաճաճներ, այս ամէհի նուազը ձեր բոյրին համար է, Լսեցէ՛ք, ոմանցդ համար ի խրախոյս կ'երգեմ, և ոմանցդ համար ի պատիժ, լսեցէ՛ք:

կարմիր գաղտնիքներու գանձապահին ոսկիէ պատանքն է որ ձեր ամենուն առջև պիտի քակեմ,
 Անիկա այլևս դիւցազնութեանց խորհրդանիշն է և դերագոյն թուիչքը կամքի ճերմակ մրկիլն...
 Անոր մահուան օրը ժամանակին թիւերուն մէջ արորէ օղակ մըն է ամէն մեծութիւն իրեն շղթայող,
 Անիկա հեզնութիւն է, ուժ է, թոյն է, սէր է և ժպիտ, լուսութիւն մըն է փոթորկածայն և աղաղակ մը ապառաժեայ:

Եւ Անիկա այսպէս որոտաց. «Ա՛հ գաղտնիքը իմա է, կարմիր սրբութիւնը և իմաստը իմ դիտակից դոյութեանս,
 «Բարբարոսօրէն իմա է և ո՛չ ո՛քի, ո՛չ շղթային, ո՛չ ծեծիւն, ո՛չ սուրին, ո՛չ հուրին, ո՛չ հարուածին,
 «Բուրբո՛վին իմա է գաղտնիքը և ինձի հետ; իմ մտածումիս և մարմնիս հետ եղբայրօրէն թո՛ղ մոխրանայ,
 «Որովհետեւ ե՛ս եմ իմ օրէնքս, վճիռն ալ ե՛ս, դատաւորն ալ ե՛ս, տառապողն ալ, յուսացողն ալ, ըմբոստն ալ ե՛ս:

«Ես իմ ուխտիս և աստուածն եմ և կուսպաշտը և ատրուշտնը և նաժիշտը՝ և սպասարկո՛ւն,
 «Ուխտադրո՛ւժ, դաւաճա՞ն, հայրենատեա՞ց, ա՛հ ներեցէք, բըքիջիս սևը կրնայ ձեր արևը խաւարել,
 «Դատաքննիչ պարոններ... բայց հայ արիւնին մտածեցէ՛ք օրէնսդիրնե՛ր, բանտապաննե՛ր, բռնաւորնե՛ր,
 «Այն արիւնին որ գետերու պէս, հայրենիքիս գարուններուն մէջէն, ձեր օրէնքին տակ, եկաւ անցաւ:

«Ես չե՛մ ուրանար, ե՛ս ալ ազատութեան ոսկի արօրովն Հայրենիքիս արիւնոտ հողը երջանկօրէ՛ն հերկած եմ,
 «Ես ալ ձեռքի ըմբոստ և խորիմաստ շարժումով մը, ախօսներուն մէջ, վրէժխնդրութեանց վայրագ սերմը ցանած եմ...
 «Ես չե՛մ ուրանար, բայց կործանիչ հուճեքերուն գաղտնիքը ի՛մա է, վաղուան մրկիլին գաղտնիքը ի՛մա է,
 «Ո՛չ կը վախնամ, ո՛չ կ'ուրանամ, սարսափի դուռներուն բանալին ձեռքս է, կայծակներն իսկ չեն կրնար գայն յափշտակել,
 փորձեցէ՛ք:

«Ես գաղափարիս Տաճարին և հիմնաքարն եմ, և մաքուր երգը, և աղօթքը, և քրմապետը և իր գմբէթն ահաշէն,
 «Ես աւանդապահն եմ ցեղիս ցաւին, իր յայտին, իր հաւատքին, իր յարուժեանքը և իր արդար կշիւնին,
 «Ես աւանդապահն եմ սերունդէ սերունդ և զինւորէ զինուոր ինձ ևս վիճակուած ազատ և սրբազան երգումին,
 «Ես եռահարկը հազար դիակներու դիմաց կանգնող և պատնէն եմ և պաշտպաններէն մին անբիծ:

«Ես ան եմ որ թէ տատրակ է և թէ առիւծ, ես ատելութեանց հրդեհն եմ և սէրերու հոսանք,
 «Ես քաղցրութեանց բաժակ եմ և արդարութեան շուշան, չարիքին դէմ մերկ սուր մ'եմ և եղբայրութեան առջև ձիթեանոյ ճիւղ,
 «Ես ալ ըմպած եմ մարդկութեան մտածումին աղբիւրներէն և անոր իտէպաշտութեան ծառերէն ես ալ իմ պտուղս քաղած:
 «Ես այս բոլորին անընկճելի աւանդապահն եմ: Մեռեալ ընկերներ ձեր մահերուն մարմար դուռը իմ առջևս ալ բացէ՛ք:

«Օրերով խոստովանէ՛ գուռացին: Ես լուռ էի և ձեռքերէս բոյր եղունգներս քաղեցին: Անարցունք մնացի և անբարբառ:
 «Խոստովանէ՛ գուռացին երբ հուր-արիւնն, իմ տասը մատներէն, շղթաներս ի վար, ոտքերուս առջևն հոսեցաւ,
 «Ժամերով և ժամերով, ծորակ առ ծորակ, հոսեցաւ, ինչպէս աղբիւրներ աւազանի մը խորն,
 «Եւ ես տեսայ, ըմբոստ կամքիս երկաթ ժպիտը իմ արիւնիս հայելիին մէջը շքեղօրէն նկարուած...:

«Ա՛հ խեղճ՝ ձեռքեր որոնց մէջ յաճախ ճակատս յենած, բանտիս մէջէն, հայրենի հովերուն լացին կ'ունկնդրէի,
 «Խեղճ և ճշմարիտ ձեռք որ ատենով քերթողին գրիչը և կարիճին սուրը ունէիք ափիդ մէջ,
 «Ձեռք ահաւոր, արիւնաթոր ձեռք, սոսկումներու ձեռք, քու վրէժդ ընկերներուս կը կտակեմ...
 «Ընկերներ, իր գրիչն ալ ձեզ, իր սուրն ալ իր գորովն ալ, իր բուռնցքին մէջի կայծակներն ալ ձեզ...:

«Այս իրիկուն նորէն շղթաներս քակեցին և շողշողուն երկաթները ջրվէժի մը նման ուսերէս վար թափեցան,
 «Անասճման թիարանը դողաց և պատէ ի պատ, խուցէ ի խուց և սրտէ ի սիրտ խուռ շախնդն արձագանքեց...
 «Խոստովանէ՛ գուռացին, արևծայրք քեզ պայմանաժամ...: Յուսար: Նոյնիսկ Յոյսը վատութիւնէ ճակատադրիս հանդէպ:
 «Ես իմ գաղտնիքս փրկեցի...: Աերջալոյս, քու մահէդ առաջ, այս իրիկուն, ես իմ մոխիրս պիտի ստեղծեմ...:

«Կանթե՛ղ, խուցիս խորերէն յուսահատներու աստղին նման ալ կը բաւէ՛ որ զիս ողբաս,
 «Բու կոյր աչքիդ շիթ մը կայծը կրնայ զիս անհասելի մեծութիւններու կատարները բարձրացնել,
 «Եւ եթէ՛ դարերով ալ այսպէս նշուես խաւարը խաւար պիտի մնայ, տառապանքը տառապանք և ոճիրներու գահը գահ,
 «Գժեթադներուն լոյս պէտք է տալ լոյս ամբոխներուն, ըլլա՛յ մաքէն, ըլլա՛յ մատենէն, ըլլա՛յ սուրէն, ըլլա՛յ մարմինէն:

«Այսպէս դուն, արտասուաթոր կանթեղ որ կամքիս մրկիլներուն քով քու թշուառութիւնդ կը պլպլաս,
 «Արիաբար՝ մօտեցիր, քու բիւրեղէ անօթիդ իւզովը մարմինս, մազերս և սիրով լեցուն սիրտս պիտի օժեմ...
 «Ու վառ պատրոյգդ օձի մը նման թող շրջի և գալարուի իմ վրաս, մինչև բիբերն իմ հաջող աչքերուս...
 «Գալտնիքը իմա է: Ես դիտեմ որ կրակներէս Հայրենիքիս անպառնի արևին մէջ ճառագայթ մը կ'աւելցնեմ:

«Այլևս մնաք բարեա՛ւ, զինակիցներ և ընկերներ, դուք հեռաւոր կամ բանտակից, հալածական կամ ազատ,
 «Մնաք բարեա՛ւ: Ես իմ խորոյիս կը վառեմ...: Արեգակն ալ դիմացս դիւցազնի մը պէս կը վախճանի:
 «Ա՛հ մեռելները հետս խօսիլ սկսան... դուք մտիկ ըրէք... մեռելները բոլորը մէկ ծափահարել սկսան... ո՛վ կը ծափահարեն...»
 —Չօրաւորները միայն անմահ են: Արցունքը տկարներուն և ծունկի՛ իջէ՛ք, ծունկի՛, ծունկի՛ ամբոխներ, ծունկի՛ և սոսկացէ՛ք...:

Մարմինը իր վրայ վառած կրակին մէջ գիշերն ի բուն ճարձատեցաւ Առաւօտուն, դատաւոր, բանտապահ և շարջարիչ,
 Բոլորը մէկ, բանտախուցէն ներս խուժելէն իրենց ախառները կրճտեցին, մտրակները շարժելով և լուսանքներ տեղալէն
 Յետոյ՝ չորս մեռելակիներ գազաղ մը ուսերուն վրայ և այդ դազաղին մէջ ոսկորներ, պարկ մը մոխիր և գանկ մը դրած...
 Հերոսին գահանդական աճիւնը, ոճիրներու ոստանին մէջէն, լուին թաթառի մը նման, դէպի գերեզմաննոց տարին:

Ապագաներուն մէջ, Գիւլյաններու մը, Հայրենի հրապարակի մը վրայ, կուսակցի կաթողի մը պատուանդանէն, ԱՐՄԵՆԱԿին Գանկը ի ձեռին, զայն աստղի մը նման շողացնելով, փառքի այդ կատարը զետեղելէ առաջ պիտի ըսէ: — Մօտեցէ՛ք փրկուածներ, երջանիկներ, եղբայրներ կամ ապերախտներ, դուք երիտասարդք և դուք ծերունիներ, եւ ձեռքիս մէջ հանգչող դանձատու փին նայեցէ՛ք, այսօր հերոսի մը տօնն է որ Հայրենիքը կը տօնէ:

— Հանդիսատեսներ, ձեր աչքերը այս գանկին սեւեցեցէ. ես այսօր Անճառելին ճառել պիտի ջանամ... Այս ստիրառուփը իր մէջ կը պարունակէ իր հարազատ մարմնին ադամանդէ մոխիրին հետ, Անբժուփիւն և հաւատք, երազ և իրագոյն, իր զինուորի արիւնն կաթիլ մը արիւն և հուրէ յայտ, Գիւլյանի մը կամքէն քանի մը կայծեր և իր ըմբոստի երգերէն և անէծքէն սարսուռներու քանի մը ձայն:

— Անկա փոթորիկ եղաւ և զեփիւռ, բռնաւորին դէմ չարիք և խողաղութեան համար լլլսի առաւօտ, Անկա ուժ եղաւ և ապառաժ, նոր օրերու ռազմիկայ և փրկութեանց հիմնադիր, Բայց, զայն՝ այս երկնքին հրաշալէայը տակ և ձեր պայծառ պաշտամունքին վրայ յուերթացնելէ առաջ՝ Հայ-ժողովուրդ, այս անկախաստիւրին տակէն, իր փառքը երգելով, նախ, կարգ առ կարգ, յաւաքացէ՛ք...: —

ՍԻԱՄԱՆԹՕ

Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԳՆԱԾԱՄԸ. — Արքայապետ Շահը յաջողեցաւ տապալել Մէճլիսը՝ որուն գոյութիւնը շատ խօշ չէր թուէր իր վեհապետական ձգտումին, թէ և քանիցս երգում կերած էր, որ պիտի յարգէր իր հօր ազատական կտակը շնորհած «անազատ» Իրանին: Սակայն այդ երգումը պարսկական քէթմանն էր (կեղծութիւն), որ ամբողջ բռնապետական Իրանի հասարակական աշխարհահայեացքը կը բնորոշէ: Գեկտեմբերի պետական հարւածի անյաջող փորձէն յետոյ Շահը յայտարարած էր իսկ որ «Մէճլիսը սուրբ հաստատութիւն» մըն է:

Հակառակ այդ երգումպատաններուն՝ Շահին և Մէճլիսին միջև վիճը կընդլայնէր. մահափորձը աւելի զգայուն ըրաւ այդ հակառակութիւնը, մանաւանդ որ էնձիւմէնները, Մէճլիսին փուշտիպանները, չէին դադարէր սպառնալէ. և Շահի մահոգութիւնը օրօրի կը ջղայնանար, սակայն կը պակսէր, երկու կողմին ալ զիրար զգեցնելու ջիղը.— դրամը:

Սահմանադրութիւնը ձիշդ է լայն արձագանք գտաւ երկրին մէջ, բայց անսահմանութիւն մը կար ուր տարբերը փարսախներով, մէնզիլներով կը բաժնէին:

Շահը յաջողեցաւ իր ուժերը վերակազմել, Էմիր Պահատուր ձենկի հրամանատարութեան տակ, ամբացաւ Շահպաղի պալատը և խիստ պահանջ դրաւ Մէճլիսին իրեն յանձնել ազգայնականներու պարագլուխները: Մէճլիսը մերժեց՝ էնձիւմէնականները զօրքերուն վրայ կրակ ըրին, յունիս 23-ին: Առիթ էր: Չօրքերը ռմբակոծեցին Պահարիսգանի դալատը, Սիփահ Սալար մեծ մզկիթը, ուր ապաստանած էին, յեղափոխականները և ուրիշ հաստատութիւններ: Չերբակալեցան ընդդիմադիրներէն, յեղափոխական խմբագիրներէն, որոնք կատարի ժաքօպէններ համարւած էին: Շահը տարտաք կախել տուաւ մէկ քանի պարագլուխներ, ինչպէս և Սուրէսրաֆիլ թերթին խմբագիրը որ սպաննելէ առաջ ազազակեց «կեցցէ սահմանադրութիւնը, անկցի դաւաճանը»:

Շահը դրութեան տէրն էր շնորհիւ Էմիր Պահատուրի և ուստի հրամանատար Լիախովի: Անոքը հալածանքը և սարսափը ընդհանուր էր: Երէկի ազատա-

ղունչ Թէհրանը, սուգի մէջ ինկաւ: Բոլոր սահմանադրութեան մեծ դերակատարները պատտ մտան դեսպանատունները, բացի գերմանականէն որ վայրենիօրէն իր դռները փակեց մահուան ճիրաններէն փախստականներուն առջև: Գերմանական մեծ թերթ մը կընդունի որ այդ քայլը մեծապէս պիտի փնտէ գերմանական հմայքին Պարսկաստանի մէջ:

Ռուսիոյ մատը կուզեն նշմարել, Պարսկաստանի այս արիւնոտ պետական հարւածին մէջ: Լիախով, Շահալ վերջինը Շահի ուսերէնի ուսուցիչը, թելագրիչը կը համարւին կատարւած մեծ ոճիրին: «Թայմզ» թղթակիցը կը մեղադրէ, կօզակ Լիախովը իբր դրոյնը Պահարիստանի ռմբակոծման և անոր լիազօրութիւն տալը կըսէ՝ բռնաբարում մըն է անկոռուս համաձայնութեան: Հաւանականութիւն կը գտնէ ուսական ինդրիկը անով, որ Ռուսիան սահմանադրականութեան ամէն մէկ քայլին մէջ կը նշմարէր հակառուսական ղգացումը:

Շահը Մէճլիսը խորտակելէ յետոյ, յայտարարեց, ժողովուրդը հանդարտեցնելու համար, որ ինքը սահմանադրութիւնը պիտի պահպանէ, և երկիրը պիտի օժտէ բաղձալի յառաջդիմութիւնով: Կը խոստանայ երեք ամիսէն նոր ընտրութիւն կատարել:

Անգլո-ուս համաձայնութիւնը, որ Պարսկաստանի դէպքերու պատճառով երկիւղ կար թէ կազդէր, ընդունեց «անմիջամտութեան բաղադրականութիւնը»: Սակայն Անգլիոյ մէջ որոշ մտահոգութիւն կը տիրէ Պարսկաստանի մէջ ուսական ինդրիկներու մասին:

Թէպրիզը որ Սահմանադրականութեան ամրոցն էր սկզբէն ի վեր, Մէճլիսի անկումին վրայ, յեղափոխական դրօշակ պարզեց, և ցարդ անողոր և արիւնահեղ կռիւները կը շարունակէին ազատականներու և յեղափոխականներուն միջև: Յետագիմականներուն կօգնեն դրսէն գացած պաշտպօղուկներ:

Եթէ Շահը կրցաւ բանգել Խորհուրդը և արիւնի մէջ խեղդել ազատական շարժումը, բայց հաւանական չերևար որ կարողանայ իր ներկայ ուժերով և միջոցներով խողաղացնել ամբողջ երկիրը, ուր սահմանադրական գաղափարը, գրեթէ գրկաբաց ընդունւած է, և լաւագոյն ապագայի երևակայութիւնը բորբոքած երազուն ժողովուրդի մը որ տառապանքով և ատելութիւնով ապրած է միայն:

Անգլո-ուսու համաձայնութիւնը զգալի կըլլայ սահմանազլխի կուրն մէջ ևս: Ռուս ղեկավարը, որուն ուժ կուտայ անգլիականը, պահանջեց Գոնէն, ետ քաշել զօրքերը Պարսկաստանէն և վերջ ղենել աւերաւերումին և քրդերու ասպատակութիւններուն որոնց «անտարբեր չկրնար մնալ Ռուսիան»: Սալմաստը և Ռւրմիոյ գաւառը յետին թշուառութեան ու հալածանքի մատնուած են թահիր փաշայի ձեռքէն, որուն տղան ալ Վասպուրականը կուերէ: Երևի այդ սերունդը ծնած է պատուհաս ըլլալու համար միայն: Մեծ վէշիւրը ապահովուցերէ ուս ղեկավարին որ պիտի հրամայէ իսկոյն որպէսզի զօրքերը դուրս գան և սակայն ղեռ. կը մնան...

* * *

Վերջի ամենամեծ քաղաքական դէպքը Անգլիոյ կայսեր և ցարին տեսակցութիւնն էր յունիս 9-ին, Ռէվէլի ջուրերուն մէջ: Ասիոյ երկու գարաւոր ոստիները, «կէտը» ու «արջը», կը բարեկամանան: 1907-օգոս. 31-ին, արգէն կնքած էին պայմանագրութիւն մը, որով երկու տէրութիւնները Ասիոյ մէջ իրենց անհամաձայնութիւններուն վերջ կուտային և իրենց շահերու և ազդեցութիւններու սահմանները կը գծէին: Անգլիոյ համար, հինաւուրց մտկոլական երկիւղը, երկար ատենի համար փարատուած է: Եւրո համաձայնութիւնը, երկու պետութիւններուն համար Ասիոյ մէջ քաղաքական գործունէութեան նոր և աւելի վճռական շրջան մը կը բանայ, որուն ազդեցութիւնը զգալի պիտի ըլլայ, հաւանօրէն, Հնդկաստանէն մինչև Ագրիական:

Տեսոնեան կատարութիւնը փրփրած է, իր շուրջը լարած դաւաճանութեան համար որուն հեղինակը կը համարին Էդուարդ Թագաւորը, որ կը ձգտի «շրջանակի» մէջ առնել Գերմանիան: Թէև ցարը և կայսրը, իրենց բաժակաձառերուն մէջ կը հաւաստեն որ անգլո-ֆրանկո-ուսու համաձայնութիւնը... «աշխարհի խաղաղութիւնը ապահովելու» համար է, որուն կապառնայ միայն Գերմանիան:

Թիւրքիա նոյնպէս մտահոգ է, որ մի գուցէ Ռէվէլի տեսակցութիւնը իր գլխուն վրայ անակնկալ ուսմը մը պայթեցնէ: Թիւրքերը, առանց գիտնալու թէ ինչ խօսուած է, տխուր նախազգացում մը ունին, այնպէս որ Գերմանական մամուլը ձայնակցելով Թիւրք շրջանակներուն մէջ տիրող կարծիքին, կը յայտարարէ որ «ոեւ հարած Թիւրքիոյ իրաւունքներուն արձագանք կը գտնէ ամբողջ միւսիլման աշխարհին մէջ»: Համիսլամական ուրուականն է նորէն, որ Գերմանիան կը ցցէ Անգլիոյ աչքին և կուզէ ահազգել:

Քայլերը կը ջանայ Գերմանիոյ հայրենասիրութիւնը որք հանել բոլոր դասական խօսքերը, որոնք Գերմանական ամբարտաւանութիւնը և ուժը կը խտացնեն, կը բռնէ ամէն տեղ: «Գերմանիան երբէք այնքան բաջութիւնով պատերազմած չէ, որքան երբ ամեն կողմէ կը յարձակի»: Ակնարկելով Գերմանիոյ դէմ հաւանական պատերազմին, բացառանջած է զօրքերուն առջև «թող գան, մենք պատրաստ ենք»:

Գերմանիան այս րոպէիս ահուգողով կապրի, հակառակ իր ճառթճուածներուն, որովհետև «մահու և

կեանքի» հարցը դուած է իր առջևը: Լուր կայ որ Գերմանիան մտադիր է Թիւրքիան երրեակ գաշնակցութեան մէջ մտցնել, ինչոր պատերազմի պահուն պատկառելի ոյժ մըն է Ռուսիոյ դէմ: Թիւրքիան պատրաստ կերևի, առահի, նետուելու Գերմանիոյ և Աւստրիոյ դիրքը իր դիրքը փրկելու համար:

Միւս կողմէ Պուլկարիա ձայն կը բարձրացնէ յայտարարելով որ Անգլո-ուսու բարենորոգումի ծրագիրը զինք չգոհացնէր, թէ ինք իր վրայ միայն յոյս կը դնէ այլևս իր շահերը պաշտպանելու համար: Իշխանը նոյնպէս կը ծանուցանէ Անգլիոյ Թագաւորին, թէ իր դրութիւնը վտանգալից է և թէ պիտի ընտրէ կամ յեղափոխութիւն Պուլկարիայի մէջ կամ պատերազմ: Արևելքի գորգեան հանգոյցը սուրով պիտի լուծուի, ատոր համար ամէն մարդ իր գաշոյնը կը սրէ և վառօղը կը չորցնէ...

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

„Berliner Lokal Anzeiger“-ի յունիս 13-ի թիւին մէջ հրատարակած է:

«Ասիի մտ Թիւրք ղինուրներու միջոցով ստորերկրեայ ճարպկիօրէն շինուած այրի մը մէջ դանուած և գերի բռնուած են Ասիի Գաշնակցութեան կոմիտէի ղլխաւորը՝ Արամը, Ասիի փոխահամագալեալ սպանողի եղբայրը՝ Վահրամը և կոմիտէի քարտուղար Պետրոսը»:

«Գրոշակի» հեռագիրը Ligue des Droits de l'hommeի նախագահին, Լիւն գումարուած համաժողովին առթիւ յունիս 6-ին. —

«Պրէսանտէ,

Նախագահ՝ Մարգու Իրաւունքներու Միութեան»:

«Կողջանքը Մարգու Իրաւունքներու Միութեան քաջարի համաժողովը, որ կը ներկայացնէ յեղափոխական Գրանտայի լուսադոյն աւանդութիւնը: Յոյս ունինք որ Միութիւնը պիտի կրկնա ատէ իր կողովը, աղնաւորոյ կուր մղելու համար ինպատ հարստահարածներուն»:

Եւրոպական թերթերէ.

«Մարգու Իրաւունքներու համաժողովի բացման ճառին մէջ, նախագահը, պր. Գրանտայ դը Պրէսանտէ, յայտարարեց թէ Միութիւնը, պէտք է, աւելի քան երբէք, գործ դնէ իր ազդեցութիւնը Արդարութեան համար, համաձայն Յեղափոխութեան Սկզբունքներուն: Յետոյ՝ նախագահը, ծափահարութիւններու մէջտեղ, կարգայ «Գրոշակի» խմբագրութեան համակրանքի հեռագիրը»:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԻԵՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

(Կալուսի 4. Յ. Կ. 1908 թ. Խոհուրդի արձուագից)

Խորհուրդը որոշում է.

- 1) 4. Յ. Գաշնակցութիւնը իբրև կուսակցութիւն չի մասնակցում կաթողիկոսական ընտրութիւններին:
- 2) Գաշնակցական անհատները իբրև սոսկ քաղաքացիներ ազատ են վարուելու ըստ իրենց հայեցողութեան:

ԸՅԿԵՐՈՒՆ և քաղաքացիներ.

Հ. Յ. Դաշմակցութեամբ Չորրորդ Ընդհանուր Ժողովի ուշադրութիւնից վրիպած չէիմ այն բազմատեսակ վրդովիչ կեղեքումները, որոնց ենթակայ էր և է տակաւին մասամբ Կարսի շրջանի հայ գիւղացիութիւնը մի խումբ իմքնակոչ «յեղափոխականներին» կողմից: Դրանց շարքում գտնուում էին մասն մի քանի մասիկիմ դաշմակցականներ, որոնք շարունակուում էին մութ անկիւններում շահագործել կուսակցութեամբ անուում:

Իրերի այս արգահատելի կացութեամբի դարմամ տամբու մպատակով, Ընդհ. Ժողովը մասնաւորապէս յամծմարարեց Հ. Յ. Դ. Կովկասի Ահաբեկիչ Մարմնին հարկաւոր միջոցները ձեռք առնել՝ մաքրելու Կարսի շրջանը այդ կեղեքիչներին:

Ահաբեկիչ Մարմինս ի լրումն անցեալ 1907-ի գարմամ և ամառամ մէջ ձեռք առած արտակարգ միջոցներին՝ որոնք մասամբ միայն կարող էին զգաստացնել այդ չարագործներին, վերջերս դիմեց անելի կտրուկ միջոցի:

Գրաւոր կերպով պահանջ դրեց այդ զեղծարարների պարագլուխներին նշանաւորին՝ խլաթցի Աւագին (մականունով «Առիւծ») սինջև մայիս 20 հեռամալ իր խմբով դէպի Բաթում այնտեղ սպասելով Քոմիչ Ատեանի հրաւերին. Հակառակ այն յօտարութեամբ որ Աւագը կանխաւ յայտնել էր թէ գրաւոր կերպով և թէ իր մէկ ազգականի միջոցով ենթարկելու կազմակերպութեամբ որոշումներին — մա ոչ միայն մերժում է ատեանի հրաւերը, այլ և հրապարակաւ մախատալից հայհոյանքներ է թափում յեղափոխական կազմակերպութեամբ մասցէին:

Ուստի Ահաբեկիչ Մարմինս նկատելով,

Որ խլաթցի Աւագը իր գլխին հաւաքելով անգործներին մի խմբակ չարաչար կեղեքում է գիւղացիներին Հ. Յ. Դաշմակցութեամբ լիազօր խմբապետի անունով,

Որ մա կատարել է բազմաթիւ բռնաբարութիւններ,

Որ մա կատարել է կամ մեղսակից է եղել անմեղների սպանութեամբ,

Որ մա իր ներկայութեամբ Կարսի շրջանում քաջալերելում է հակայեղափոխական և աւագակային տարրերի զարգացումը,

Որ մա, հակառակ միմջև հիմա իրեմ նկատմամբ ցոյց տրած ներողամտութեամբ, ոչ միայն չէ ուղղել, այլ օրից օր ևս անելի լրբացել ու ամբարոյացել, և իր շահատակութիւնների անպատիժ մնալովը,

Վժռանել Հ. Յ. Դաշմակցութեամբ հմայքին,

Ահաբեկիչ Մարմինը միաձայն որոշեց մահաւան պատժի ենթարկել նրան:

Մայիսի 17-ին ահաբեկիչների խումբը գործադրում է վճիռը հրացանազարկ անելով Աւագին և նրա երկու ընկերներին Համբարձումիմ և Մաւրակցի Գրիգորին, որոնք փորձում էին պաշտպանել նրան:

Յայտնելով այս բոլորը իւրու հասարակութեամբ, Ահաբեկիչ Մարմինս ներկայիս պահանջում և հրամայում է բոլոր նրա մամծներին, որոնք բոյմ են դրել Կարսի շրջանում, ամմիջապէս ձգել հեռամալ այդ շրջանից: Հակառակ պարագային, այս առաջիմ ազդարարութիւնից յետոյ, նրանց անունները պիտի հրատարակելիմ և նրանց նկատմամբ ևս ձեռք պիտի առնելիմ խստագոյմ միջոցները:

Առիթից օգտուում ենք մի անգամ ևս յայտարարելու որ Դաշմակցութիւնը ոչ մի խմբապետի իրաւունք տւած

չէ Կարսի շրջանի գիւղերում մատելով դատ վարելու, տուգանք ստամալու ևայլմ:

Հրաւերում ենք հասարակութեամբ ամխմայ հալածել և խփել բոլոր ոյմ կարգի զեղծարարներին, որոնք գալիս են բոյմ պահանջներ անելու, Դաշմակցութեամբ կամ յեղափոխութեամբ անումից:

Ժամամակ է վերջապէս որ հասարակութիւնը իմքմ էլ կազմակերպել իր սեփական ուժերով, պաշտպանելու իր գոյքմ ու պատիւը ամեն տեսակ խաչագողների և դրամաշորթների դէմ — որպէսզի Դաշմակցութեամբ ձեռք առած միջոցներմ էլ պսակելիմ վերջնական յաջողութեամբ, ունենամ տուում համգամանք, վերահաստատելով Կարսի շրջանում մախկիմ խաղաղութիւնը և բեղմնաւոր աշխատամբը:

20 մայիսի 1908 թ. Հ. Յ. Դ. ԿՈՎԿԱՍԻ ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Արեւմտեան Ռուսի ստացած է՝

Ղ. Ի. Գ. Ե. Ի. Կ. — Նէր մեկնագործ Գրիգորէն 5 ժր., 2. Երազէն 7 ժր.: Դումար 12 ժրանկ:

Նաւահանգսի Կեդր. կոմիտէն

Ստացել է 1905 թ. յունիս 29-ից յուլիս 3: Տէր-բաղդ 25 ռուբլի, Կ. Ալիին 50, Պ. Պ. Խաչիկ 15, Բուլբուլ 25, Յարութիւն 50. Բէօմ 50, Բէգ 25, Եղբայրներ 100 2-Գր 100 Պ. Պ. 25, Ս. Ս. 50, Սպայ 50, Թամալ 25, Սար-խան 50, Կ. Ման 25, Նուր-բայ 100 Բ. Տէր-Ս. 10, Եղ. Սուլ. 150: Դումար 925 ռուբլի:

ԱՊՍՍԱՆԻ ԿՈՄԻՏԵՆ, — 1905 մարտ 20-ից նոյն. 26: Հեկեւալ խմբերից՝ Ծմակ գիւղի Կայծակ 5. 50, Նիժնիանի Կայծակ 7, Նորակազմի Արծիւ 8. 40, Ժայռի Առիւծ-բերդ և Ծերեկ 36. 75, Միացեալ Գ. Մամիկոնեան 3. 60, Եւս 3. 60, Հրահանգի Շովակիւ Առիւծ 12. 35, Միացեալ Գ. Մամիկոնեան 3. 60, Լեւոնային Արլէմ 3. 50, Լեւոնային Արածանի 4. 50, Միացեալ Գ. Մամիկոնեան 3. 60, Հրահանգից Երկաթ-հրատ 24, Պաճակ գ. Շահէն 10. 40, Անտան գ. շահիկ 337. 25, Եւս 39, Երկաթ գ. Հրայր 12. 15, Անտան գ. Վագր 101. 40, Միացեալ գ. Մամիկոնեան 3. 60, Երկաթ գ. Փայլակ 17. 80, Եւս 69. 15, Արլէմ 6. 80, Արածան 9. 50, Միացեալ գ. Մամիկոնեան 3. 60, Արեւան գ. Արլէմ 6. 50, Ընկեր- Երիսաւ. Լեւոնային կենդ. խմբերից 14. 75, Երկաթ գիւղ. Կար-Սէժեր 28. 50, Ճանիկ գիւղի ամապկարներ 18. 20, Ճանիկ գիւղ 350, Կրիստափոր գիւղ 101. 40, Երկաթ գ. Փայլակ 10. 5, Եւս 26. 40, Սեւ ծով գ. գէլբունցիներից 30 Դումար 1317 ռուբլի 95 կոպէկ:

ԴԱՇՏԻ ԿՈՄԻՏԵՆ՝ 1907 յունիս դեկտ. — Հեկեւալ խմբերից՝ Բաչալեր 28 ռուբլի, Հրայր 35, Պարթև 20, Բաչալեր 7, Մարտական 21, Բաչալեր 6, Ման խ. անդամ Մամիկոնի պարթևի դիմաց 60, Հայկից սեպտ. 100, Զայրմայրից սեպտ. 100: Դումար 377 ռուբլի:

1905, 1906 և 1907-ին Նաւահանգսի հեկեւալ խմբերէն՝ Ծովասար 15. 20, Ծիրնկասար 36. 80, Ռեւոնեան 15, Տոմոս գեհ 58, Գիւզալ դարա 27, Մերակ 23. 50, Եւս 16, Առիւծ 25. 80, Ծովասար 13. 60, Եւս Արարից 1, Արեւել 124, Եւս Գրիգորից 5, Եւս Նորակոչից 5. Ներքով 103, Տոմոս գեհ 17, Գիւզալ դարա 14, Գոսա դաղ 34, Աղբիւր-կամարա 4, Տոմոս գեհ 3, Մախին 38, Արիւն 30, Ռուբինեանց 33, Բագրատունեան-սապան 6, Աղբիւր ա. 4, Երիսաւ 29.50, Սոյխան 60, Թուման 13.50, Ծիրնկասար 10.60, Ելխանեան 12, Մուշեղ 58, Դազան-սարոցի 43, Մանդաւեր 35, Սուրէնեան 52, Ագրայիլ 16. 80, Խաչէն 74, Սոյխան 2, Արեւել Խ. Յ. Մէհրաբ 3, Արեւել Խ. Յար. Զախ. 3. Սեփան 65, Կաթիլ 114. 50, Մերակ 63, Կարէզ 30, Արեւել Խ. Մ. Վ. 309 մեծ փամփուռ, Ներքով Պ. Ալ. և Սեղ. 309 մեծ փամփուռ, Դանօ, Պերոն 204, մեծ փամփուռ, Բլէզան 12, Մախին 67, Եւս Եպիֆիլից 34, Գիւզալ դարա 17, Վրիժառու ներ 7. 60, Ռուբինեանց 50, Բագրատունեանց սապան 6, Գոսա-դաղ 8, Զարեանդ 125, Գոսա-դաղ 20, Աղբիւր Կամարա 6, Առիւծ 30, Մանկունեա 29. 80, Արեւել 70. 20, Տոմոս գեհ 59. 50, Կարին 22, Դազան-Տարոցի 42, Եւս 14, Արծիւ թ. 8. 40, Ծովասար 13, Վարագար ա. 93. 90, Նոր-Կեանք 36. 85, Վարից ներ 7. 50, Աղբիւր ա. 8, Բաչալեր 40, Արիւն 30, Գոսա-դաղ 5, Ծիրնկասար 20. 40, Յաւաչ 1. 50, շարսար 67. 50, Վարագար թ. 84. 60, Դերակ 70. 50, Ելխանեան 8, Խաչէն 45, Սոյխան 61, Խիկար 10, Պողոսյան 9. 40, Սոյխան Սարոցի ներ 1, Արծիւ ա. 11. 50, Կարէն նոր անդամներից ներ 15, Առիւծ Վահան ներ 1.50, Յոյս խմբի Յ. Տ. 2. ներ 14, Եւս 2. 2. անդամներից ներ 12, Առիւծ Ա. Լեսսից 1, Առիւծ Արեւելից 1, Յոյս անդամներից 26, Յարաթ 1. 50, Ներքով 69, Զրափիլ իւլիան 60, Վլեպայ այգիմացի 10, Դերակ սիւնից 6, Վրիժառու 4. 50, Վրիժառու Յովնանեանցի ներ 1 ռուբլի, (Շարունակելի)